


Дект.
67. А. Н. 6. 385

ԿԱԶՄԵՑ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՆԻԵԼԵԱՆՑ

ԺԱՆՏԱԼԻՏ

(P E S T I S)

Հանրամատչելի զբոյց երեք պատկերով



ТИФЛИСЪ

Тип. „Экономія“, Ав. Мугдуси-Акопова
Б.-Ванкская ул. № 3.

1911

616.9

7-17

Арм.

112-38672

30 JUL 2010
2-38672/1645

616.9

ԿԱԶՄԱ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՆԻԵԼԵԱՆՑ

17-17

F J H

ԺԱՆՏԱՒԻՏ

(P E S T I S)

Հանրամատչելի զրոյց երեք պատկերով

Հասարակական առողջութիւնը ժողովրդների
բախտաւորութեան հիմքն է կազմում և երկրի
հզօրութիւնը: Նրա վերաբերմամբ հոգացողութիւ-
նը պէտք է լինի իւրաքանչիւր՝ պետական մարդու
առաջի պարտականութիւնը:

Ասել է լորդ Բիկոնսֆիլդ Անգլիական
պարլամենտում դեռ 1875 թւին:

Հասարակական առողջութիւնը այն հիմնաքարն
է, որի վրա հիմնվում են ժողովրդի բարօրու-
թիւնը և պետութեան հզօրութիւնը:

Գիշրսէլի,

ԱԲ. № 20621

ТИФЛИСЬ

Тип. „Экономія“, Авл. Мугдуси-Акопова
Б.-Ванкская ул. № 3.

1911

ՕՐԾ ԽՎ 0 8

6831

28 MAR 2013

ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



370 6-82

Անգլական գրամական ուղարկություն հայոց զան
իշխան անցել, այլ և աւելի քան հաւանական
յանձնական տառելությունը պահանջվում
է ուստի այս պատճենը պահպանություն
մասունք է համարել հէնց այժմ։

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Ժանտախտի երեալու վտանգը մեզանում
ոչ միայն չէ անցել, այլ և աւելի քան հաւանա-
կան պէտք է համարել հէնց այժմ։

Մնցեալ տարւայ Օդեսսայի համաճարակը,
Հաթում, Բագու և Հաշտարխան ծովափնեայ
քաղաքներում երեան եկած առաջն գէպքօրը,
չեմ ասում գեռ Հաշտարխանի նահանգում Կիր-
պիզեան տափաստաններում և Օդեսսայում պար-
բերաբար երեւացող համաճարակը, անշուշտ,
նպաստաւոր հող են պատրաստել նոր համաճա-
կային բռնկումների համար։

Այդ բանին քիչ չեն նպաստել անցեալ տար-
վայ Մանջուրեայի սոսկալի կոտորածը։ Այդ
անկոչ հիւրի երեալը Կովկասի սահմաններում
այնքան էլ զժւար չէ, անսպասելի էլ համարվել
չէ կարող։ Եւ եթէ, իսկապէս, նա մուտք գոր-
ծելու լինի, դա կ'լինի մի ընդհանուր համատա-
տարած աղետ, քանի որ տեղական ազգաքնա-
կութիւնը ընդհանրապէս և մասնաւորապէս հայ
շինականը, հայ գիւղական համայնքները տար-
բական անգամ հասկացողութիւն չունեն այդ
հիւանդութեան որպիսութեան, նրա դէմ ընդհա-

Նուր ոյժերով մաքառելու պայմաններ ստեղծելու և միջոցներ ձեռք առնելու մասին։ Որովհետև այդ առնելի հիւանդութեան վերաբերեալ հրատարակված հանրամատչելի գրքոյկները շըկան հրապարակի վրայ (բացի մեծ քաղաքներում բժիշկների կարդացած ու ատենախօսած դասախոսութիւններից) ուստի մննը նպատակայարմար գտանք զազմել ներկայ աշխատութիւնը և առաջարկել հայ ընթերցող հասարակութեանը, յուսալով որ այդ գրքոյկը օգտակար կ'հանդիսանայ, հետաքրքրութիւն կ'գրաւի և չաւ ընդունելութիւն կ'գտնի ժողովրդական լայն խաւերի մէջ։ Մենք մեր ոյժերը ներածին շափաշխատել ենք ամփոփել այնուեղ այդ հիւանդութեան նկատմամբ եզած կարեոր հին և նորագոյն տեղեկութիւնները, օգտուելով, ի հարկէ, յայտնի հեգինակների՝ գիտական գրքերից և ընթացիկ բժշկական մամուլից։

Միևնույն ժամանակ այդ սոսկալի հիւանդութեան նշանների հետ ծանօթացնելու և մօափուր գողափար տալու նպատակով գրքոյկին կցումննը հետևալ պատկերները. 1) ուռուցքալին ժանտախտը՝ կոնսատակին, 2) ժանտախտի փթախտալին վերքը զլխի վրայ և 3) ժանտախտի բացիլները։

Ֆելդշեր Յովհաննես Դանիելեանց
Դամբարի պղնձահանքեր։
(Զանգեզուրի գաւառ)

ՓԱՆՏՈՒՏԻՒՑ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Ժանտախտը, ինչպէս երեսում է մեզ հասած տեղեկութիւններից, յայտնի է եղել զեռ ևս շատ հիմ ժամանակներից, հաստատապէս տարափոխիկ, վարակիչ հիւանդութիւն է, որի դրգապատճառները 1894 թւին Հօնդակոնդում ֆրանսիացի Հերսէնի և միաժամանակ մէկը միւսից անկախ եապօնացի Կիտազատօի ջանքերով գտնված ժանդախտի բացիլներն են։ Այդ մասին ակնարկներ կան Աստուածաշունչ գրքի մէջ, լիշուած է նաև Հօմերոսի Իլիականի մէջ, Հերօգոտի և մանաւագ Թուկիդիդէսի մօտ (երկրորդ Պելօպօննեան կորինների ժամանակից համաճարակներին 431 թւին Ք. ծ. առաջ)։ Հին ժամանակներում և նոյն իսկ առաջի տարում Ք. ծ. յետոյ, թէ այդ և թէ միւս բոլոր համաճարակները հարց է զեռ իրօք եղել են ժանտախտալին, ինչպէս այժմս ենք մենք հասկանում «ժանտախտ» խօսքը։ Կարելի է ասել, որ զա զեռ ևս վիճէլի խնդիր է, որովհետև այդ ժամանակաշրջանում թէ ականատեսները և մէ հաղինակ տոր մարդիկ չեն կարողանում որոշել ու նկարագրել, տալ այսպէս ասած կլինիկանական նշանները, այլ հիմնվում էին

այդ տարափոխիկ հիւանդութեան ընդհանուր նշանների և ընդհանուր մահացութեան վրայ. ինչպէս որ ասել է Գալիքը (ապրել է Ա տարում Ք. ծ. յեռոյ). «Եթէ մի տեղում որեւէ հիւանդութիւն լայն ծաւալ է ստանում, դա կոչում է համաճարակային հիւանդութիւն, իսկ եթէ միաժամանակ մեռնում են հիւանդացողներից շատերը, դա արդէն նշանակում է ժանտախտ է»

Առաջին իսկական մեծ ժանդախտի համաճարակը, որ բռնել էր Հռովմական ամբողջ պետութիւնը, և կլանից, համարեա, ազգաբնակութեան կէս մասը, պատահեց Յուստինիանոս կայսրի օրով, VI դարում, և կոչվում է Յուստինեան ժանտախտ։ Ժանտախտային այդ մեծ համաճարակը ճշգրիտ նկարագրված է։

Կ.-Պօլսում ժանտախտը, որ տարածուած էր 542 թւին, օրեկան կոտորում էր 10. հազար մարդ։ Այդ ժամանակներից յետոյ ժանտախտը Եւրոպայում երևացել է պարբերաբար և մեծ կոտորածներ է առաջ բերել։

Ժանտախտի ամենասաստիկ համաճարակը պատահել է XIV դարում, այն է 1347—1352 թւականները։ Պատութեան մէջ այդ համաճարակը Սնի Մնէ անունը սաացաւ և մուտք գործեց Եւրոպա Սսիայից, այն է 2ինաստանից, որտեղ, չինացոց պատմագիրների ասելով, 5 միլիօնից աւելի մարդ կոտորեց, իսկ Եւրոպայում նա կլանեց ազգաբնակութեան (^{1/4}) մի քառորդ մասը։ Սև մահը բռնեց ամբողջ Եւրոպան, տարած-

վելով մինչև հեռաւոր հիւսիսը, ինչպէս Գրէլանդիան։ Ժանտախտը չէ խնայել սաեւ Ռուսաստանին, ուր նա 1351 թւին մուտք գործեց մի կողմից Լեհաստանի, իսկ միւս կողմից՝ Հաշտարխանի վրայով։

Մեռածների մասին ճշգրիտ տեղեկութիւններ չըկան, բայց անկասկած է, որ մահացութիւնը համեմատաբար աւելի է մեծ եղել թէ նախկին և թէ յետագնյ համաճարակներից։ Ինչպէս նկարագրում են, շատ տեղերում ազգաբնակութիւնը բոլորովին բնացինց է եղել։ Իտալիայում ալդ շրջանում մեռել է ազգաբնակութեան կէսը, Գերմանիայում, մօտ 1^{1/2}, միլիօն, քիչ չեն վնասուել սաեւ միւս պետութիւնները։ Տեղ-տեղ մահացութիւնը այսքան մեծ է եղել, որ թաղելու հնարաւորութիւն չեն ունեցել. շատերին գցում են եղել գետերը, ծովերը։ XIX-րդ դարում Եւրոպայում ժանտախտից մեռել է 25 միլիօն ժողովութդ, յետագայ տարիներում այդ հիւանդութիւնը մերժ երևում էր, մերժ կորչում միջին և հարաւային Եւրոպայի այլ և այլ մասերում, իսկ ամենից աւելի և սիրեց Լեհական և Տաճկական Պետութիւնները, նմանապէս Եգիպտոսը, Միջիան ու շարունակուեց մինչև XVIII դարը։ Այդ դարից սկսած արեմտեան Եւրոպան ազատ մնաց աննշան բռնկումներից անգամ, և ժանտախտը, այնուհետեւ նկատվում է միայն Ռուսաստանում ու Բալքանեան թերակղզում։

Խուսաստանի նկատմամբ սկզբնական տե-

զեկուլիւնների ժանտախտի մասին վերաբերում են 1090 թւին, երբ նիւէվում, նեստօրտաքաջրի ասծլով, երկու շաբաթվայ մէջ մեռան 7000 հոգի։ Դաժան սև մահը 1351—1353 թ. տարածուած էր Ռուսաստանի բարեխառն գօտիններիւմ, ոիլութի համաձարակը անթի ժողովուրդ կլանեց, իսկ Մի քանի քաղաքներում նոյն ինկրնացինչ արենց ամրեղջ նպարսահութիւնը։ Ամենից աւելի տիւծեցին Պոկով և նօվգորոդ քաղաքների։ Ժանտախտից մեռաւ նօվգորոդի Վանականի և Մեծ Իշխան Սիմէօն Քարգին։ XV, XVI և XVII դարերում նա յաճախակի յայտնվում էր Ռուսաստանում, բայց ամի՞ կործանարար, աւելի համաձարակը Մէլքոն։ Միխայլօվիչի թափառիւթեան օրենքովն էր, 1664 թւին։ XVII դարը յայտնի դաշնաւ Մօնկվայի սոսկալի համաձարակը, որ սկսվեց 1670 թւին։ Հոկտեմբեր ամսից և տեսնեց մինչև 1772 թ. զեկութեմբեր անինը, և այդ ժամանակվայ ժամդախտի համաձարակմերը դէմ մաքառող գլխաւոր հերոս բժիշկ Շափօննկու անելով, զոհ տարան 130 հազար մարդ, որից միայն 127 հազարը թակուել է պետութեան հաշւով։ Մյու համաձարակից յետոյ ժանտախտը դարձեալ երթացնել է մի քանի տեղերում, բայց այլսա մեծ շավերի շի հասել, Պատրօնավումկան գործողութիւնների ժամանակ նա յաճախակի երեսում էր զօրքերի մէջ Պետրոս Դի և Եկատերինա Ռուսի օշներով։

Մասնաւորապէս Պովկասում ժանտախտը առաջին անգամ երևացել է միննոյն XVIII-րդ դարի սկզբներում՝ 1716—1717 թւին տանելով 70,000-ից աւելի զոհեր։ Վրաստանում ժանտախտը 1770 թւին ահազին քանակութեամբ զոհերէ տանում թէ ուս զօրքերից և թէ տեղական ազգաբնակութիւնից։ Միայն Թիֆլիզի իրա մէջ մեռնում են 4,000 հոգի։ Համաձարակը այնքան ուժեղ է լինում և սարսափը այնքան մեծ, որ 1781 թւին երակի թագաւորը փախչում է քաղաքից։ 1797 1798 թւականներին, մի փոքր մեղմացած համաձարակը ունկում է թիֆլիսում նոր թափով և այնքան ուժեղ, որ կառավարութիւնը ստիպուած է լինում արգելել ժողովրդին յուղարկաւորելու վախճանուած երակի թագաւորի մարմինը (Ծղ. Երիցեան)։ Պաշտոնական տեղեկութիւնների համաձայն, ժանտախտի համաձարակը այնուհետև 1798 թւից մինչև 1854 թւականի վերջը պատահել է երեք անգամ, որոնցից առաջինը տևել է մինչև 1818 թիւը, այսինքն 20 տարի, երբեմն սաստկանալով, երբեմն էլ թուլանաւով։ Նրա ժագումը զաղկապում են «Հարսի և Ալիսալցխայի փաշալղութեան ու թիւրքեալի նրանց հարեան մասերում» տիրող ժանտախտային համաձարակի հետ, իսկ բարեպատեհապայմանը Պովկասի նուաճման համար սկսած պատերազմական գործողութիւններն էին, որոնց շնորհիւ նա մուտք գործեց զօրքի մէջ, անցաւ Պովկասի ազգաբնակութեանը, ապա և Թուսաւտանս։

Ժանտախտային երկրորդ համաճարակը Կովկասում սկսուեց ՀԻՀ դարի առաջին կիսում՝ 1828 թվին սակայն նա տևեց 3—4 տարի միայն։ Այս անգամ ևս նրան նելմուծել էին ժիւրքիայից ողուսական զօրքերը, որոնք Պասկէվիչի հրամանաժառութեամբ պաշարել էին երզրումը և Ղարսը։ Ղարսի բերդը առնելուց յեռոյ, ողուսական զօրքերի մէջ 20 օրվայ ընթացքում ժանտախտից մեռան 520 հոգի և Պասկէվիչը հարկադրուած էր նոյն իսկ այսպիսի մի զեկուցում ուղարկել. «ժանտախտ երեաց զօրքի մէջ Ղարսը առնելուց 3 օր յետոյ. այդ հանգամանքը մեզ հարկադրեց զարքեցնել մի առ ժամանակ պատերազմական զործողութիւնները»։ Այդ ժամանակ Ղարսում ժանտախտից մեռան 2600 հոգի, իսկ առողջացողներ եղան միայն 46 հոգի։ Երբորդ համաճարակը դարձեալ ժիւրքիայից էր անցել. նախ և առաջ նա սկսուեց պատերազմող զօրքերի մէջ և ողուսական զօրքերից էլ, չը նայելով որ բռնկումը համեմատաբար շուտ ով մեկուսացվեց, նա այնուամինայնիւ անցաւ սահմանագլխի մօտ գտնուող շրջանները 1843 թվին և երեան ու Ալէքսանդրովի քաղաքներում բաւական կոտորած արեց. Վերջին անգամ ժանտախտը 1854 թվին երեաց նաև Դանձակում, բայց շատ թեթև ու շուտ անցաւ. 1854 թւականից դէսը՝ մինչև մեր օրերը, բարեբախտաբար Կովկասը գերծ է մնացել այդ անկոչ հիւրից, այդ սարսափելի հիւանդութեան այցելութիւնից։

Յիշտակված ժանտախտային դէպքերը բոլորն էլ վերաբերում են այս հիւանդութեան ուսուցքայիր (բուբօննի) կոչուած տեսակին։

Ժանտախտը ՀԻՀ-րդ դարում յաճախակի մուտք է գործել ոչ միայն Կովկասը, այլ և Մուսաստանի ստորիննահանգները, յայտնուել է Օգեսայում, Սեաստօպօլում և Վոլգայի ստորին հոսանքներում (վլխաւորապէս Հաշտարխանը): Երկար ընդհատումներից յետոյ, նա նորից երեաց Հաշտարխանի մօտերքում Վետլեանսկ ստանիցայում (կօգակների գիւղ) 1878 թւի հոկտեմբերի 17-ին և շարունակուեց մինչև 1879 թւի յունվարի 13-ը, տանելով 359 զոհեր, որոնցից՝ 3 բժիշկ, 6 ֆելդշեր, մի գթութեան եղբայր և մի գթութեան քոյր։

Վետլեանկայում 1879 թվին յունվար ամսին երբ երեաց ժանտախտը, նրա առաջն առնելու համար նշանակվեց Հաշտարխանի, Սարատօվի և Սամարայի ժամանակաւոր գեներալ նահանգապետ կոմս Լօրիս-Մելիքեանը լիազօրուած անսահմանափակ իրաւունքներով։ Յունվարի 27-ին երբ հասաւ Ցարիցին, ժանտախտի էպիդէմիան թուլանում էր, մասամբ շափազանց դաժան կարանտինային միջոցների շնորհիւ, որը ձեռք էր առել ինքը ազգաբնակութիւնը ժանտախտով բռնկուած ստանիցայում, այսպէս որ Լորիս-Մելիքեանին մնում էր նախազգուշացնել նրա կըկնվելը, տեղական սահիտարական պայմանները

բարելաւելով: Պաշարելով չորս զօրաշղթայով ամբողջ Հաշտարխանի նահանգը, Լորիս-Մելիք-հանը տնձամբ յաճախեց Վետեռանկան և համոգուելով որ վտանգը անցել է, ինքը զեկուցում տուեց գեներալ-նահանգապետութիւնը վերացնելու համար, ծախսելով իւստ տրամադրութեան տակ գրված 4, միլիոնից ոչ աւել 308 հազար ըուբլուց և այգպիսով, շնորհիւ Լորիս-Մելիքեանի սմբենակտը ու միջոցների, համաճարակը շտարածվեց, մեկուսացվեց ու կարճ ժամանակամիջոցում վերջացաւ:

Վերջին համաճարակը սկսուեց 1894 թւին հարաւային 2ինսաստանում, ապա անցաւ Հնդկաստան և ահագին զոհեր տարաւ Կանտոնում, այդտեղ մեռաւ 60 հազար մարդ. նախ երեւաց Բօմբէյում: Ալնդեղից նա մուտք գործեց Հօնդկոնցը Հնդկաստանը: 1896 թւից մինչև 1910 թիւր, այսինքն 15 տարուայ ընթացքում, ժանտախտից մեռել են բնդամենք, գոնէ, շուրջ 2000,000 մարդ: Եւ այդ շրջանում ոչ մի տարի չէ պատահել, ոչ նա հարիւրաւոր կեանքեր տարած չը լինի: Հնդկաստանից, շնորհիւ առևտրական եռուն յարաբերութիւնների, միշտ մուտք է գործում Եւրոպակի և այլ երկրների գանազան նաւահանգիստները: 1898 թւի հոկտեմբերին ժանտախտը յայտնվեց Ռուսաստանի միջին-ասիական սահմաններում, այն չէ Մամարկանդի շրջանի Անդօր դշլաղում: Ընորհիւ կառավարութեան ձեռք առած արտակարգ միջոցների, հնարաւոր

նղաւ սակայն նրան մեկուսացնել և տեղն ու տեղնէլ արմատախիլ անել:

1898 թւին ժանտախտը մեծ աղմուկ առաջ բերեց Վիէնայում: Հիւանդարանական-անդամանատական ինստիտուտի ծառայ Բարիշը վարակուեց ժանտախտով, հաւանօրէն, ժանտախտի կուլտուրաների հետ անզգոյշ վարելուց նա թոքալին տեսակի ժանտախտով հիւանդացաւ, որը առաջիւ օրերում բժիշկների համար անճանաչելի էր մնացել: Դրանից վարակուեց բժշկապետ Գերման Միլիերը և հիւանդապահ կիս Պէլսան: ծըեքն էլ մեռան: Զեռք առած միջոցների շնորհիւ, Վիէննայում այլս նոր դէպք ըլ պատահեց:

Իռուպաստանում ժանտախտի բռնկումները վերջին ժամանակներս յաճախակի են պատահնել, այսպէս օրինակ Կոլորօվկա և Վլադիմիրօվկա գիւղերում (Հաշտարխանի նահանգում), Օդեսայում, Ուրալան շրջանում և Կիրկիդների տափարակներում, որտեղ մինչև այժմ էլ կոկնվում է ամեն տարի, իսկ ներկայումս նաև Մանջուրիայում: Ժանտախտը երևաց Օդեսայում մայիսի սկիզբներին: 1910 թւին յուկիսի կէսին նկատելի կերպով սաստկացաւ, ժակտախտային համաճարակի ամբողջ ընթացքում և 4 ամսում պայմտեց հիւպանդացան 160. առգի, որոնցից մերգակ 50-60 հոդի, այսինքն 30% ն. բարեգուկ առաջարարար, ձեռք առնված արտակարգ միջոցներով, աջողվեց պահմանկարիակել համաճա-

բակը Օդեսսայի մէջ և թուլացնել։ Ներկայ տարվայ լրագրական տեղեկութիւնները հաղորդում են թէ Օդեսսայում, թէ Հաշտարխանի նահանգի՝ Կիրգիզեան տափաստաններում հատ-հատ երեցող ժանտախտային գէպքերի մասին։

ԺԱՆՏԱԽՏԻ ԱԿՁԲՆԱՊԱՏՅԱՌՆԵՐԸ — Ինչպէս ասացինք վերևում ժանտախտի սկզբնապատճոռները բացիներն են, որոնք ունեն իրանց առանձինայտկութիւնը. որովհետև ժանտախտով հիւանդացած մարդկանց և կենդանիների կազմուածքի մէջ, անգամ դիակների մէջ, գտել են յատուկ բակտէրիաներ (մանրէներ) որոնր առողջ մարդկանց կամ որևէ ուրիշ հիւանդութիւններով հիւանդացողներին երբէք չեն պատահում. նրանց հեշտութեամբ կարելի է աճեցնել մարմնից դուրս և դրա օգնութեամբ է առաջ բերել մարդկանց ու կենդանիների մէջ ժանտախտ։ Ժանտախտի բացիները ներկայացնումեն փոքրիկ հաստ ձուածե և անշարժ ցուպիկներ կրորացրած ծայրերով, որոնք անիլինի գոյնով ներկելուց, ներկապահնում են թոյլ և մէջը բոլորովին չը ներկուած, ներկիլում են միայն ծայրերը։ Այդ պատճառով դրանց անուանումն շատեռային բակտերիաներ որովհետև ցուպիկների երկու բնեռները, համեմատաբար միջին մասերից, աւելի խիստ են. յներկում։ Այդ առանձնայատկութիւնը յատուկ է հաւի խօլերայի բակտէրիաներին։ Ժանտախտ հիւանդութեան ցուպիկների թոյնը խօլերայի վիրիօնների և տիֆի բացիների տօկսինի (թոյն)

նման կապուած է բակտէրիաների մարմնի հետ և կոչում է էնդոտոկսին։

Նա հեշտութեամբ պատւաստվումէ առնետներին, մկներին, ծովային խոզիկներին, որոնց նա սպանում է մի քանի օրվայ մէջ։

Բաւականին դիմացկուն միկրօբներ են ժանտախտի ցուպիկները, ցրտերում նոյն իսկ շենկորցնում իրանց կենսունակութիւնը, ինչպէս այս նկատելի եղաւ Մանջուրայում՝ վերջին ժանտախտի ժամանակ. լրյուի մէջ, ընդհակառակը, ոչնչանում են բաւականին շուտ՝ մի քանի օրում։ Բաւականին ուժեղ ներգործութիւն ունեն նրսնց վրա մանաւանդ արեկի ուղղահայեաց ճառագայթները, որոնց ազդեցութեան տակ ժանտախտի ցուպիկները ոչնչանում են մի քանի ժամկայ մէջ։ Արագ շորացները նոյնպէս արագութեամբ սպանում է այդ ցուպիկներին, իսկ եռացնելը՝ անմիջապէս։ Նրանք դիմանումեն 20 օր ցածր ցրտի, որի շնորհի տարվայ ցուրտ եղանակներին մնում են կենսունակ, իսկ բարեխառն աստիճանի և խոնաւութեան մէջ կենդանի օրգանիզմից դուրս՝ պահպանվումեն շարաթներով, մինչև իսկ ամիսներով։

Ժանտախտի ցուպիկները շատ հեշտութեամբ կոտորվումեն ախտահանիշ միջոցների ներգործութիւնից, այն է սուլեմայի 1:1000, կարբօլեան 5% թթւուտը ոչնչացնումէ նրանց մի քանի րօպէում։ Ներգործում է նաև ֆօրմալինի

$10^{\circ}/\circ$, մարած կիրը $1^{\circ}/\circ$, ծծմբաթթուի $5^{\circ}/\circ$ և կրային $1^{\circ}/\circ$:

Վերջինս հիւանդի կղկղանքի մէջ 2 ժամվայ ընթացքուս սպանում է այդ բացիներին, իսկ հիւանդի խորխը (բղլամը) եռացնելուց իսկոյն անվարակելի է զառնում: Ժանտախտով հիւանդի կազմուածքի մէջ ցուպիկները միշտ զտուվում են լուբօնների (գեղձերի) մէջ, նոյնպէս և արեան, լեարդի, փայծաղի և ուրիշ օրգաննեցում: Կտոր են նաև խորխի, կղկղանքի մէջ: Ա լեզվի երեսին գոյացած շերտի մէջ: Սոննետները, կապիկները, մկները և տարաբազանները աւելի են ընդունակ շուտով ժանտախտով վարժակվելու քան թէ մարդիկ:

Վերջինները, այսինքն տարաբազանները, ժանտախտի տարածման գործում ամենայայտնի դեր են խաղում Սիրիբիխայում և Մօնզօլիխայում: Դրանք թունաւոր մանրէները իրանց միջոցով փոխազրում են մի տեղից, ու առարկալից ուրիշ դանազան առարկաների վրա, որոնց հետ մարդիկ շփուրով վարակվում են ժանտախտով:

Մի բանի խօսք էլ տարաբազանների մասին: Դրանք պատկանում են կոծողների այն ցեղին, որոսք ապրում են Մօնզօլիխայի տափարակներում: Տեղացիները նրանց որսում են ուտելու համար, իսկ մորթուց պատրաստում են գանգան կաշաւ և մուշտակէ ապրանքներ: Մասամբ երաշտների ժամանակ՝ տարաբազանների մէջ շատ անզամ զարդանում է ժանտախ-

տի նսան մի հիւանդութիւն, որ սաստիկ տարափոխիկ է և վարակում է մարդկանց: Այդ ժամանակ զգուշութեան համար դնում են ազդանշաններ և խօստ արգելվում է որսալ տարաբազաններ, որովհետեւ ժանտախտանման հիւանդութիւնից կոտորուած այդ կինդանիների հետ թեթև շփում ունենալը շափագանց երկիւղալի է և վարակիչ մարդկանց համար: Այդտեղի ազգաբնակութիւնը, որը ընդհանրապէս շատ աղքատ պայմանների մէջ է ապրում, այդ ժամանակ աւելի է տառապում սովածութիւնից և զրկանքներից: Այն ասձինք, որոնք կենդանիներից վարակուել են ժանտախտով, վարակում են ուրիշներին էլ ու այդպիսով՝ ժանտախտի համաճարակը սկսվում է և տարածվում արագաւթեամբ առեւտրական հաղորդակցութեան ճանապարհներով այն բնակավայրերը, որտեղ բնակիչները ապրում են սննդառութեան և առողմագահականի կողմից՝ վառ պայմանների մէջ, աղքատութեան և կեղտոտութեան մէջ:

Մի ամբոջ շարք դիտողութիւններ, որոնք հաւաքուած են եղել ժանտախտի գլխաւոր կենտրոնում՝ Հնդկաստանում, Մօնզօլիխայում, Սիրիբեայում և այլն ցոյց են տուել, որ այդ հիւանդութիւնը մեծ մասամբ յատուկ է կոծողներին, և ժանտախտի ձողիկները (bacillus pastis) աճում և բազմանում է աւելի սիրով այն կենդանիների վրայ, որոնց լուերը ծառայում են տարածագներ այդ սարսափելի վարակման և հեռանալով մղրմ.



Կրծոգների դիակներից որովհետև նրանք սիրում են կենդանի և տաքարին, անցնում են մարդկանց ու ընտանի կենդանիների. շների և կառուների վրայ.

Այստեղ չափազանց բնորոշ է յիշել հետևեալ դէպքը՝ որ 1910 թւին տեղի ունեցաւ Լօնգոնի մօնիկ Սուֆֆօլկում։ Նախ զեռ նոյն տարին գարնանը Լօնգոնի բակտերիօլոգները լուրջ ուշադրութիւն դարձրին Լօնգոնի մի քանի տներում գտնուած մկների ու առնետների դիակների վրայ. որոնց հետազօտութիւնը ցոյց տուեց որ մեծ քանակութեամբ ժանտախտի բացիլներ են պարունակում իրանց մէջ. անմիջապէս եռանգուն միջոցներ ձեռք առան առնետների ու մկների բնացինջ անելու համար և վտանգն արդէն անցած էր համարվում երբ անսպասելի կերպով նոյն տարի աշնանը՝ սեպտեմբերի 15-ին հէնց Լօնգոնի քթի տակ Սուֆֆօլկում հիւանդացաւ Փրեստոն գիւղացի մի օրիորդ էմմի Գուրայլ և 3 օրում մեռաւ ինչ որ անյայտ հիւանդութիւնից, որը համարեա, իսկոյն և եթ զերեզման տարաւ նաև նրա մօրը, խորթ հօրը և մի հարևանուն. Տեղական բժիշկները իսկոյն միջոցներ ձեռք առան նրանց թաղմանը մասնակցող 12 հոգուն իիստ կարանտինի ենթարկեցին. Բայց քիչ ժամանակից յետոյ, շրջակայ դաշտերում սկսեցին գտնուել թափթփուած առնետների նապաստակների և ճագարների դիակներ. Այդ դիակները յանձնուեց բակտերիօլոգների հետազօտու-

թեան և պարզուեց, որ Սուֆֆօլկի այլ էպի-դէմիան իսկական ուռուցքային ժանտախտ է եղել. Ի միջի այլոց բննութիւնը պարզեց և այն, որ օրիորդ էմմի Գուրայլ հիւանդայել էր կատուն շայելուց։

Փայտոցիները (թախտաբիթիները), լուերը, ոջիները և ճանջերը լափում-ծծուս են ժան-տախտի ցուպիկները և պահում իրանց մարմնի մէջ։ Մկների (մեծ մկների) դիակների մէջ նկատուած է, որ ժանտախտի բացիլները կենդանի են մնացել բաւական երկար ժամանակ, իսկ վարակելու յատկութիւնը, թունաւորութիւնը՝ մինչև երկու ամիս։

ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՒ ՄԿՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ. — Ժանտախտի իսկական աղբիւրները, այսպէս ասած՝ էնդէմիական բները, համարվում են չորս տեղ, որտեղից տարածվում է աշխարհիս զանազան մասերը պլոֆ. Տօ-լոզանիի ասելով, ժանտախտի բունը գտնվում է Արդէնիայում և Քիրգիստանում։ Պլոֆ. Գիշշի ասելով, գտնվում է Հիմալայեան լեռան հարաւային լանջերում, նորագոյն տիղեկութիւնների համաձայն այդպիսի բներ գտնվում են նաև Չինաստանում, իսկ պլոֆ. Կօխի ասելով, Ափրիկայում։ Այդ բոլոր տեղերը իրարից զանազանվում են նրանով, որ ներկայացնում են բարձր, ջրով աղքատ տափարակային երկիրներ, որտեղ բնակութիւն են հաստատել աղքատ հովուական ցեղերը։ Այդ էնդէմիական (տեղան սրակ) բնե-

թից ժանտախտը տարածվում է շնորհիւ միջնազային յարաբերդութիւնների, գլխաւորապէս ծովային ճանապարհներով, նախ և առաջ նուանանգստային քաղաքներում:

Ժանտախտի համաճարակի ելեալը որևէ տեղում և զարգանալը կախուած է երեք գործօններից: 1) միջրօքանների ներմուծման աստիճանից, 2) սանիտարական և 3) կլիմայական պայմաններից: Վարակումը սուտք է գործում, ինչպէս ներկայ բժշկական գիտութիւնն է ցոյց տայիս, միշտ կամ հիւանդ մարդկանց, կամ կենդանիների (առսետների, մկների) և կամ վարակուած իրերի միջոցով, ժանտախտը զանազանվում է խօլերայից նրանով, որ վերջինից հիւասդանում են միայն մարդիկ, իսկ ժանտախտի տարածմակը ծառայում են մարդիկ և կենդանիները (մեծ մկները):

Ապացուցուած է, որ մարդկանց մէջ ժանտախտը բռնկուելուց առաջ միշտ սկսվում է մեծ մկների, կոտորած, այսպէս ասած ժանտամահ, որոնք տարածում են այդ վարակիչ մանրէները. իսկ վերջիններն էլ տարածվում են սովորաբար այն հողում, որտեղ, շնորհիւնաւագնացութեան, մուտք եւ գործում հիւանդ մկները: Վերջիններս նաւերից նաւակապ պարանով կամ նաւից անցնելով նաւահանգիստները ու ցամաքափը ապրանքների հետ, վարակում են ցամաքի տեղական մկներին ու այդպիսով արագ կերպով տարածում ժանտախտը:

Մկների մէջ ժանտախտի արագ վարակմանը և տարածմանը նպաստում են նախախայն մկները, որոնք կերած են լինում սատկած մկներին և երկրորդ՝ լուերը, որ միշտ լինում են մկների վրա. Նրանք հիւանդ մկների արիւնը ծծելով, տեղափոխվում են նրանց մահից յետոյ առողջների վրայն, կծոտելով, վարակում գերջիններիս, իսկ դրանցից տեղափոխվուի են մօրդկանց վրա ու կծոտելով ներմուծում՝ նրանց օքանից մէջ թունաւոր մանրէները. Վարակում ժանտախտով:

Ժանտախտը մկներից անցնում է մարդկանց մի ուրիշ ձևով՝ նույն առողջ մկները, ուտելով ժանտախտից սատկած մկների դիակները իրանք էլ հիւանդանում են ստամոքսմյին աղնքային, տեսակի ժանտախտով իսկ զրաեց արտադրած կղկղանքը, որ նոյնպէս վարակիչ յատկութիւն ունի; Խառնուելով տնալյն փսորների, կեղտութութիւնների և այլ ուրիշ իրերի հետ, որտեղ մկները ազատ ել ու մուտք ունեն, այդ իրերի միջոցով, որոնց հետ մարդիկ շփում են ունենում, վարակում են մարդկանց:

Ժանտախտի տարածմանը նպաստում են նոյնպէս հակառողջապահական պայմաններն ու աղքատութիւնը. Պլիսաւոր պատճառն էլ հէնց այդ է, որ այդ սոսկալի հիւանդութիւնը նոյնանման ուրիշ վայտակիչ հիւանդութիւնները տարածվում են. Պլիսաւորապէս աղքատ, ընշագույն կուրկ դասակարգի մէջ և ամենայն իրաւաժը

կարելի է ասել, որ ժանտախտը աղքատների ու թշւառների հիւանդութիւնն է:

Ժանտախտը մարդկանց վրայ ուղղակի փոխադրվելուց զատ՝ տարածվում է նաև զանազան իրեղէնների միջոցով, ինչպէս սպիտակեղէնների, հագուստների, շորեղին և այլն։ 1896 թւին ժանտախտը կօնդոն մուտք էր գործել Հնդկաստանից ուղարկված սպիտակեղէնների միջոցով, Օպօրտոյից 1899 թւին մուտք էր գործել Բուէնոս-Այրէս հագած շորեղի միջոցով։ Վարակման տեղափոխութիւնը այդ ձևով նկատվում է ազգաբնակութեան այնպիսի խաւերում, ուր բնակիչները ապրում են կեղտոտ, խոնաւքնակարաններում։ Վարակիչ մանրէները, ապականված միջավայրերում վախ չունենալով շորանալուց և արեգակի լոյսի ներգործութիւնից, երկար ժամանակ պահպանում են բոլոր առարկաների վրա իրանց կենսունակութիւնը։

Ժանտախտը հիւանդ մարդուց առողջների վրայ տեղափոխելու գործում մեծ դեր են կատարում միջատները, այն է՝ լուերը, փայտոջիլները (թախտաբիթիները), ճանճերը, որոնց վրա ժանտախտի մանրէները ապրում են երկար ժամանակ։ Փայտոջիլների վրայ ապրում են նրանք 72 ժամ, իսկ ճանճերի վրա 7—8 ժամ, որից յետոյ վերջիններս ստակուառում են։

Զուրը, ժանտախտը տարածելու գործում, ոչ մի դեր չէ խաղում և, հակառակ խօլերայի, որի համաճարակը յաճախ սկսվում է բունկում-

Ներով, ժանտախտի տարածումը միշտ բնույշում է դանդաղ աճեցողութեամբ և դանդաղ էլ թուլանալով։ Խօլերայով վարակվում են միշտ սննդամարսական գործարանների — աղիքների միջոցով, մինչդեռ ժանտախտը՝ մորթու և թոքերի միջոցով։

Զափազանց բարձր տաքութիւնը (100°) և սաստիկ սառնամանիքները արգելք են հանդիպանում ժանտախտի տարածմանը։

Էնդէմիական բներում ժանտախտի մանրէները, մկների շնորհիւ, պահպանվում են։ Երբ հիւանդութիւնը մկների մէջ սկսում է թուլանալ։ Նրանցից մի քանիսի մէջ այդ հիւանդութիւնը յարատե, խրօնիքական ընթացք է ստանում և չէ վերջանում, մի խօսքով դառնում է էնդէմիական (աւեղաճարակ)։ Խրօնիքական հիւանդ մկներից նոր ծնուած կամ նորեկ մկների մէջ առաջ են գալիս նոր համաճարակներ և առաջդպիսով ժանտախտը տարածում են այդ վնասակար կենդանիները հեռաւոր տեղեր։

ԺԱՆՏԱԽՏԻ ՎԱՐԱԿԻՑ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԸ. — Ժանտախտը տարափոխիկ հիւանդութիւն է։ այսինքն ընդունակ է մի մարդից անցնել միւսին։ Սովորաբար առողջները շփումն ունենալով հիւանդների հետ վարակվում են ժանտախտով։ Մակայն բազմաթիւ օրինակներ են եղել, երբ ժանտախտով հիւանդ մարդկանց հետ առողջները, չը նայելով որ շփուել են, բայց և այնպէս չեն վարակուել։ Ժանտախտը առողջներին չէ

անցել: Եիննոյն ժամանակ՝ ապացուցված է արդէն, որ ոմանք աւելի են ընդունակ, աւելի են տրամադրի ժանտախտով վարակութելու, ինչ ոմանք՝ ոչ: Նախազգուշական միջոցներով, այօինքն առանձնացնելով հիւանդներին առաջներից, և կարանտիններով միշտ աջողվել է մեկուսացնել հիւանդներին, սահմանափակել համաճարակը, իսկ լաւ սանիտարական պայմանները ընդհանրապէս, սաստիկ թուլացնում են տարածումը: այդ բանը ոյն իսկ ապացուցված է արձանագրուած պաշտօնական հաշիւներով, երբ ժանտախտը Բօմբէյում 1894 թւից մինչև 1900 մթիւր տարածուածէր: Այդ ժամանակ ապշեցուցիչ թւերով հաստատուելի է, որ Բօմբէյում ապրող եւրոպացիներին ժանտախտը չէ կաշում: Ծըր 1894 թւին սկսվում է համաճարակը, Բօմբէյա են ուղարկվում 99 անդիխական գթութեան քոյթեր, որոնք իրանց բացառապէս նույիշների էին հիւանդների խնամատարութեան դործ ին: Գիշեր ցերեկ գրադիված էին նրանք հիւանդներով, նրանց սօմից ամեննին չէին հեռանում, ապրում էին նոյն հիւանդանուցներում, ուրի ժանտախտաւորներն էին պանկած, ուստիւմ էին, խմում այստեղ: Մի խօսքով, ինչպէս արժիշխները, որ միշտ յարակուած էին այնքան ահաւոր ու ահաելի ենթադրում են, որ իբր ցեղը ազդեցութիւն ունի ժանտախտով հիւանդանալու յակման վրայ: օրինակ, հօնդկօնդում և Բօմբէյում հիւանդանում, էին առաւելապէս տեղացիները: Ամենից սաստիկ հիւանդանում են հնդիկները, որոնք, պարագանակութեան ամենաազբատ մասն են կազմում: և կրօնական ինչ ինչ շարժառիթներից դրդված ապրում են միայն բուսական կերակրութեան մեջ բունում են մահմեդականները, թէև զրանք լաւ են կերակրութեամ, բան հնդիկները և, ֆիզիքապէս էլ աւելի են ամբակազմ դիմոցկուն, բայց և այնպէս կրկն

մեռնում: և մի ժամանդների տեղ՝ քոյրերը այդշափ, երկար ժամանակ, գործ գումար նային տիֆով, հիւանդների հետ ասում է պարօքա Շօմելիուսը, հաւանական է, որ վարակութեան թիւր զափազանց մեծ լինէր: և ինքնուրամինքեակ դրանից պարզ երևում է, որ հավույացիները շատ քիչ են ընդունակ ժամանակագում, վարակութելու, «Այդ մասամբ, բացատրակում է նրանով, որ եւրոպացիները աւելի բարեկեցիկ կեանքի ու առողջապահիկ, պայմաններում են ապրում, ի հարկէ, դրանից գեռ և չի կարելի հետեւնել թէ ժամանակամուշ չէ էլ կարելի ընդհանրացնել քանի որ պատահել են վարակման դեպքերը: Էականապէս այդ միայն կարող է նըրապատել այն սարսափը պակասելուն, որը մեգրութիւն թւում է այնքան ահաւոր ու ահաելի ենթադրում են, որ իբր ցեղը ազդեցութիւն ունի ժանտախտով հիւանդանալու յակման վրայ: օրինակ, հօնդկօնդում և Բօմբէյում հիւանդանում, էին առաւելապէս տեղացիները: Ամենից սաստիկ հիւանդանում են հնդիկները, որոնք, պարագանակութեան ամենաազբատ մասն են կազմում: և կրօնական ինչ ինչ շարժառիթներից դրդված ապրում են միայն բուսական կերակրութեան մեջ բունում են մահմեդականները, թէև զրանք լաւ են կերակրութեամ, բան հնդիկները և, ֆիզիքապէս էլ աւելի են ամբակազմ դիմոցկուն, բայց և այնպէս կրկն

ապքում են կեղտոտ ու վատ բնակարաններում, Երբորդ տեղը կալիս են պաշտերը, որոնց կեանքի և սովորութիւնների պայմանները, համեմատաբար, աւելի լաւ են և իրանք շատ աւելի քարձը կանգնած թէ կրօնական և թէ սօցիալական տեսակէտից, բայց այնուամենայնիւ պահով չեն համարվում ժանտախտով վարակվելու կողմից շնորհիւ իրանց ցեղալին դիւրագացութեան:

Հաւ կազմակերպուած հիւանդանոցներում թէ բժիշկները, թէ ֆէլշերները և թէ միւս ծառայողները համեմատաբար քիչ են վարակվում ժանտախտով, մինչդեռ նեղ, անմաքուր հիւանդանոցներում, աղքատների տներում վարակում աւելի յաճախ ու աւելի հեշտ է պատահում:

ՆԱԽՍՏՐԱՄԱԴՐՈՒԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. — Ժանտախտով հիւանդանալու և նրա տարածմանը նպաստող մօմենտները միահամուռ կերպով ճանաշված են սօցիալական անբարեյաջող պայմանները, այն է՝ սովը, կեղտոտութիւնը, վատ սնունդը, յսգնածութիւնը, թուլութիւնը, մարմնի և բնակարանների կեղտոտ պահելը, հիւանդների հետ մի սենեակում ապրելը, հիւանդների հետ յաճախ և երկար յարաբերութիւններ ունենալը, անկանոն կեանք վարելը և ժանտախտով հիւանդանալու ահը, սարսափը:

ԺԱՆՏԱԽՏԻ ԲԱՑԻԼՆԵՐԻ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԴՐԴԻՉ ՑԵՂԵՐԸ. — Ժանտախտի մանրէները

մարդուս մարմնի մէջ մտնելու սովորական տեղը, ինչպէս ներկայումս բժշկականութեան մէջ ընդհանրացած կարծիքը վկայում է, ծառայում է կաշին (մորթին) և թոքերը, ժանտախտի մանրէները փոքրիկ վէրքերի և բերծուածքների միջոցով ներս են մտնում կաշւի տակ, անցնում գեղձերը և ապա՝ արիւնի մէջ են մտնում նաև շըթունքներով, քթով, բերանով, երբ պղուկներ ու ճաքուածքներ են լինում: Հատ անգամ, երբ ժանտախտի ցուպիկները՝ մուտք են գործած լինում մորթու միջոցով, աննկատելի է մնում ամբողջութեան խանգարումը, այսինքն շատ անգամ չի յաջողվում գտնել շանդուուածքը կամ վէրքը: Մանրէների մուտք գործած տեղում առանձին ոչ մի փոփոխութիւն չէ նկատվում, միակ մուտք գործած մանրէները (բացիլները) աւշային ճանապարհներով համսում են աւշային գեղձերին և գոյացնում բուրօններ (ուսուցքներ) և այլն: Մարդու օրգանիզմի մէջ մանրէները մտնում են նաև ձեռների ու ոտների միջոցով, մանաւունդ նրանք, որոնք միշտ ման են զալիս բորիկ ոտքերով: Քերծուածքներ պատահելիս՝ ժանտախտի մանրէն, ինչպէս ասացինք, աւշային ճանապարհով մտնում է կազմուածքի ներս և պահպում աւշային գեղձերում: Իսկ աւշային գեղձերը մարդուս համար մի տեսակ ներկայանում են իբրև լնական գտիշներ, իբրև կայանում են իբրև լնական գտիշներ, իբրև որոնք կարող էին ներս մտնել անօթների

հոսանքով կենսական կարևոր գործարաններն ու սիրտը, հետեապէս նրանք ոչնչացման տևնդեք-
են նաև ժանտախտի մանրէնիրի համար, Ահա
այստեղ ժանտախտի մանրէները պահպում են և
կազմուածքը կուի մէջ մտնելով զբանց
աշխատում է արեան սպիտակ զնդակների ծպ-
նութեամբ կոտորել նրանց և ուրիշ թշնամի-
ման րէներին, որքան որ ոյժ են ունենում. Այդ
կորիւր արտայալովում է գեղձերի ուռչելով,
«Ժանտախտի բուրօններ» գոյացնելով. Ցաւօք
սրտի պէտք է նկատել, որ ժանտախտի բացի-
ների աճելու, բազմանալու աստիճանը այնքան
մեծ է, որ մեծամասնութեան դէպքերում ծրգա-
նկոմի ընդդիմականութիւնը անբաւական է դառ-
նում և ժանտախտի բացիները առաջ են գնում
աւելի հեռաւոր ընկած ու խորը գտնվող աւշա-
յին գիշերը մուտք են գործում արինատար անօթները վերջ ի վերջոյ ամբողջ մարմինը հեղեղ-
դում կործանարար սաղմերով. Այդ ժամանակ
ահա զարգանելում է ժանտախտալին սեպտիկա-
կան թօնաւորումը, երբ արեան ամենափոքր
կաթիլ անգամ պարունակում է իր մէջ անհա-
մար բանակութեամբ ժանտախտի բացիներ, ինկ-
կազմուածքի հետ կոիւ մզող բացիների թիւը
այնքան շատ է, որ անհնարին է հաշվի առնել. Որպիստեկ ժանտախտի վարակման համար ըս-
կզբնակետիր ծառայում են մեծ մասամբ ձեռ-
ների ու ոտների վրա պատահող քերծվածքե-
րը, այս պատճառով էլ յաճախակի պատահում

հն ուռուցքներ աճուկների մէջ և կոնտատակեցում։ Դրանով է բացատրվում, որինակ, այս փաստը, որ չինացիները, որոնք միշտ ուսաբորիկ են ման գալիս, առաւելապէս աճուկների բուբօններ են, ունենում, միշտ ու ոտամաններ հագնող եալօնացիների մէջ մնա մասամբ պատահել, են կանատակերի բուբօններ։ Մինչոյն ժամանակ բուբօններ, երեսում են նաև վզի ու ներին ծնոտի վրա, որի սկզբնապատճառը զլիսի վրայ պոկած, պրճոկած վերբերն են լինում։ Սամոյյօվիշը նկատել է, որ Փոքրիկ երեխանների բուբօնները առհասարակ երեսումն ժամանեա, սակաւ գէպքերում կռնատակերին ծնոտի վրայ, սակաւ գէպքերում կռնատակերին և համարեա, ոչ մի ժամանակ աճուկների վրայ։ «Արդեօք, — նկատումէ Դրիգինգերը, — կախուած չէ այդ սրանից, որ երեխանները դեռ ևս ման գալը չը սովորած, ամեն ինչ բերաններն են տանում։ Այստեղ կարելի է լիշտակեն աքելքում շըշիկ, իւղակաճառների անվարակելքութիւնը, որոնց մարմինները ծածկուած են լինում առհասարակ ճարպի անժափանցելի շեշտով։

Թոքային տեսակի ժանտախտի վերաբեր-
մամբ գիտնականների, կարծիքները լուրզովին
զանազանութեան իրազեց. Ամանք պնդումնն, որ
օդը ոչ մի գեր չէ խաղում. իսկ միւսների
կարծիքով, թոքային ժանտախտի առաջանալը
բացադրվում է նրանով, որ բացիլները փոշու-
հետ խառնուելով շնչառութեան ժամանակ մտ-

նումնն թոքերը և վարակում նրանց. և շատ-
անգամ ժանտախտով հիւանդները, երբ հա-
զում են, թուքի մասնիկների հետ միասին բա-
ցիներն էլ դես ու դէն են ցայտում և ալդ մի-
ջոցով էլ վարակում. հետևապէս նրանք ընդու-
նումնն որ ժանտախտի բացիները ներս են-
մտնեւմ բերանով ու բերանի խոռոշի-
միջով: Թոքային ժանտախտը ամենաերկիւղալին
է, որովհետև հիւանդները անընդհատ հազա-
լուց և թքելով իրանց արիւնախառն խորխը,
հեշտութեամբ վարակում են շրջապատի օդը,
բոլոր առարկաները, շորերը, կահկարասիները,
պատերը, տների հատակները: Դրանց
խուսը (խորխը), պստիկ մասնիկներով երբեմն
օդի մէջն է պտառում, երբեմն էլ նստում է
շուրջը գտնուող իրեղէնների վրայ և մարզիկ,
շփուելով վարակուած իրերի հետ կամ օդի հետ
միասին ներշնչելով նրանց, հիւանդանում են
թոքային ժանտախտով:

ԺԱՆՏԱԽՏԻ ՑԵՍԱԿՆԵՐԸ. — ժանտախտը լի-
նում է երկու տեսակ՝ ուռուցքային և թոքային:
Դաղտնի շրջանը մարդուս համար, այսինքն
կազմուածքի մէջ ժանտախտի բացիները մտնե-
լուց մինչև հիւանդութեան արտայայտման ա-
ռաջին նշանները, հաշվում են 2-ից մինչև 10
օր, իսկ բացառիկ դէպքերում՝ նոյն իսկ մինչև
15-ըդ օրը:

Ուռուցքային ժանտախտ սովորաբար սկս-
վում է ցնցող սարսուռով, շատ անգամ

գողոցքով և բնօրսշվում է աւշային գեղձերի
բորբոքումով, շօրհիւ ժանտախտի ցաւպիկների
մատք գործելուն, յետոյ մըսացնում է և տա-
քութիւն պատճառում, որից յետոյ տաքութեան
աստիճանը բարձրանում է մինչև $39^{\circ}-40^{\circ}$ ու
էլ աւելի մնում է այդ բարձրութեան վրայ,
միայն առաւտոները փոքր ինչ թուղանում է։
Նոյն օրը կամ յաջորդ օրը նկատվում է աւշային
գեղձերի ուռածութիւն, բուրօններ և սաստիկ
ցաւեր, շատ յաճախ ազդրի բուրօններ (Տօմ-
սոնի ասելով $29, 8\%$), ստէպ՝ կրնատակերին
(26%), աճուկային (16%), վզի (4%), ականջի
շուրջը գտնուող (2, 6%) և այլ ստէպ ծնկատա-
կերի, ուսի, թիակի և կրծքի: Գեղձերը սո-
վորաբար ուռչում են ջերարանման և նրանց
շուրջը սկսում է սաստիկ ուռչել, մորթին գառ-
նում է կոկիկ փայլուն: Մեծութիւնները զանգան-
տեսակ են բուրօնները շփելուց ցաւը այն աս-
տիճան զգալի է լինում, որ հիւանդները ընկ-
նում են անզգայութեան մէջ, բարձր ձայնով
տնքում, հառաչումնն: Ազդրային և աճուկային
բուրօններ ունենալուց՝ հիւանդները ոտքելը
կուշ բերած, քաշած են պահում ստամոքսին, և
նրանց ուղղելու նպատակով փորձեր անելիս՝
գոռում, աղաղակումն ցաւերից. Վարակուած գեղ-
ձերը հիւանդութեան 4—5-ըդ օրը ենթարկվում
են թարախակալման ու ապա իվերջոյ փոխաբկ-
վում թարախալից պստիկ պալարի: Մի քանի
ժամանակից յետոյ այդ տեսակ թարախակալած

գուբօնիր բացփումէ, թաքախը դուրս թափփում
և նրանց տեղ գոյանում մհծ խոռոշ, փոստ զատ
անդամ ուռուցքները անցնումն առանց թա-
րախակալերւ:

Բոլոր հիւանդները սաստիկ զանգատփում
են պլիացաւից, ախորժակը պակասում է, շա-
րունակ ծարաւութիւն են զգում, սրտախառ-
նութիւն է պատահում, փօխում են, միաժամա-
նակ նկատփում է սրտի թուլութիւն, այնպէս
որ դրա շնորհիւ հիւանդները հնարաւո-
րութիւն չեն ունենում գլուխները բարձրացնել,
զիտակցութիւնը պղտորփում է, յիշողութիւնը
պակասում, թուլանում, երեսնորը շառագու-
նում, հայեացը դառնում անշարժ, ահաւոր, ար-
տասահութիւնը անպարզ, խառնափնթոր, կց-
կտուր արբեցողի նման, լիզուն պատում
հաստ կավիճանման շերտով, մորթիս տաքանում,
դառնում չոր, շնչառութիւնը արագանում, գար-
կերակի բարախումները հասնում 90—120.ի
մի քառէում, մէզը պակասում, արտաթորփում
քիչ քանակութեամբ: Հիւանդութեան սկզբում
շատ անգամ պատահում է փորլուծութիւն,
բայց սովորաբար ժանտախտի ժամանակ յա-
մառ փորակապութիւն է լինում. լուծողութիւնը
անբարէյաջող նշանէ համարփում, պատահում է
նաև արնալուծ: Վարակման յետագայ նշանները
արտայայտփում են կենտրօնական զզային համա-
կարգութեան վրայ առաջ եկած ժանտախտի
բացիլների թոյների (տօկարնների). ներգործու-

թիւններով, Զզային համակարգութիւնը մեծա-
պէս վնասվում է ուռուցքային ժանտախտից. հի-
ւանդների մեծ մասը ընկնում են անզգայ զրու-
թեան մէջ, շատերը զառանցում են, իսկ շա-
տերն էլ ցոյց են տալիս սաստիկ գրգումն,
զզաձգութիւններ, ցնցումներ և նոյնիսկ կծկում-
ներ, զալարումներ:

Ուռուցքային ժանտախտը երեք ընթացք
է ունենում. 1) շանթահարող տեսակը (pestis
siderans), երբ հիւանդները մեռնում են երկու օր-
ւայ ընթացքում, իսկ շատ անզամ՝ մի քանի ժա-
մից յիտոյ, 2) կատարելապէս զարգացած
դէպքեր (pestis maior), երբ վերջանում է մահով
կամ թէ առողջանում է 5—7-րդ օրը:
Յթէ հիւանդը մինչև 7-րդ օրը չը մեռաւ, կա-
րելի է յուսալ, որ նա կառոչանայ, 3) թեթև
տեսակներ (pestis minor), առաւելապէս պատա-
հում են համաճարակի սկզբներում և վերջե-
րում: Պատահում են դրանց շատ թեթև տեսակ-
ները, երբ հիւանդները ոսքի վրայ են անցկաց-
նում (pestis ambulaforia), այդ դէպքները ամենից
աւելի են երկիւղալի հիւանդութիւնը տարածե-
լու գործում.

Ուռուցքային ժանտախտը առաջ է գալիս նբա-
նից, որ ժանտախտի բացիլները ընկնում են
թոքերի մէջ, երբ օդի մրջոցով ներշնչում ենք,
և բնորոշվումէ հետևեալ նշաններով. հազ,
շնչային էորիս (բղլամ), արիւնախառն կամ ուղ-
ղակի իսկական արիւնաթուր, խորխը արտա-

դրվում է մեծ քանակութեամբ, և ահադրանց մէջ միշտ դժոնվում են մեծ քանակութեամբ ժանտախտի ցուպիկներ։ Ուռուցքները բացակայում են, կրծքի մասերում զգացվում են թեթև ցաւեր, երեսում է անկանոն տեսակի տենդ, սրտի վաղ սժամ՝ կաթուած ու մահ ժանտախտային թսրերի բորբոքումն կարող է լինել նախնական (անպայման մահով) կամ երկրորդական (որի առողջանալը հազրադիւտէ): Վերջապէս, պատահում է փորի, նաև կաշւի տեսակի ժանտախտ։ Առաջնի նշաններն են. վաղաժամ ուժասպառութիւն, բարձր տաքութիւն, զառանցանք, հարինքային դրութիւն, երեսի արտայատութիւնը բութ, ընկճուած, համարհա, ջրային կղկղանք, ուռուցքների ուշ երեսումն, մահ։

Կաշւի տեսակի ժանտախտը շատ սակաւ է պատահում: Բացիները, ընկնելով կաշւի մէջ, առաջ են բերում թարախակալած բշտիկներ, ոլոնք պարունակում են իրանց մէջ ժանտախտի ահաւոր բացիկները. այդ բշտիկները պատովում են, շրջապատող հիւսուածքները սեանում, փթում, թափում ու զառնում վէրը: Սովորաբար դա վերջանում է արեան վարակումով (septicaemia) և մահով։

ԺԱՆՑԱԽՏԻ ՃԱՆՑԱՉԵԼԸ.—Երբ մի տեղ ժանտախտ է յայտնվում, սկզբնական դէպքերը դժուար է լինում անմիջապէս որոշել: Բայց որովհետև ժանտախտը իր կործանարար և աւերիչ հետևանքներով ահազին վնասներ է պատ-

ճառուս ժողովրդին, հեշտութեամբ ընդարձակ ծաւալ ստանում, ուստի անհրաժեշտ է, որքան կարելի է, շուտով որոշել նրա երևան զալը, համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար: Յաճախ սկզբնական պալարի, վէրքի դէպքերը կարելի է շփոթել սիբիրսկան ախտի հետ, իսկ ծանր դէպքերի ժամանակ՝ արեան բծերը, պետէխիայի, և ուշացած ուռուցքները կարելի է ընդունել բծաւոր տիֆի տեղ: Թիւրիմացութիւնների տեղիք կարող է տալ աւշային գնդարի բորբոքումը, սիֆիլիսի ուռուցքները և ականջի շուրջը գտնուող գեղձերի բորբոքումը: Այդ պատճառով, եբբ ժանտախտ է սպասվում, պէտք է միշտ լուրջ ուշադրութիւն դարձնել ամեն մի թեթև, կասկածելի դէպքի վրայ, իսկ դէպքերը կասկածելի պէտք է համարել, եբբ կայ սուր տենդային հիւսնդրութիւն, մթնացած, շփոթած զիտակութեան հետ, ըուրծոններով (ուռուցքներով), պալարներով, կամ երբ արին է թքում (թոքային ժանտախտը), երբեմն առանց որևէ ֆիզիքական նշանների թոքերի կողմից: Այդպիսի դէպքերում հիւսնդների արտադրութիւնները անպայման պէտքէ հնթարկել բակտերիօգիական (մահուաբանական) քննութեան։

ՆԱԽԱԴԱԿՈՒԹԻՒՆԸ.—Ժանտախտի վերաբերմամբ զուշակութիւնը ընդհանրապէս անսպատակ է: Մահացութեան տոկոսը շափականց բարձր է և հասնում է հիւսնդանոցներում 64%,

իսկ մասնաւոր տներում $85\% - 90\%$: Համաճարակի սկզբում և վերջում այդ տոկոսը քիչ է, քան ամենաուժեղ ժամանակը: Ուռուցքային ժանտախտը աւելի թեթև է, իսկ թոքայինը տալիս է 100% մահացութիւն: Եթէ ուռուցքային տեսակի հիւանդը կարողացաւ ապրել մինչև հիւանդութեան 7-դ օրը, այն ժամանակ առողջանալու յաջողութեան երաշխաւորութիւնը շատ շատ է: Ուռուցքների երեւլը, մասնաւանդ թարախակալումը որոշ շափով բարեպատեհ նշան կարելի է համարել: Վատ նշաններ են պետխիան, գուացաներ և փորւածութիւնը: Ջատ անգամ մահը վրայ է հասնում ամեն մի ժամանակ և պատահել է, օրինակ, երբ հիւանդները նոյն իսկ առողջանալու վրայ են եղել, եղեել են յաճախակի անսպասելի մահուան դէպքեր, իսկընդհակառակը, ամենաանյուսալի հիւանդները, որ աէտք է մեռնէին, կատարելապէս առողջացել են:

ԺԱՆՏԱԽՈՑԻ ԴէՄ ԿՌՈՒԽԵԼԸ: Ինչպէս ուրիշ վարակիչ համաճարակային հիւանդութիւնների ժամանակ, այնպէս էլ ժանտախտի ժամանակ ամենազիստաւոր տեղը բռնում է ոչ թէ բժշկութիւնը, այլ պաօքիլակտիւան, այսինքն նախազգուշական միջոցները: Ի նկատի առնելով ժանտախտի զպողականութիւնը, անմիջական յարաբերութիւնների ճանապարհներով նրա անցնելը մէկից միւսին, ինքն ըստ ինքեան հասկանալի է դառնում կարանտինի նշա-

նակութիւնը իրեւ ամենաանհրաժեշտ հասարակական—սանիտարական նախազգուշական միջոցներից մէկը: Այդ հիւանդութեան դէմ կոիւ մզելը պէտք է լինի միջազգային և միջասարակական, բառիս ամենաանզպարձակ մոքով և զակական, բառիս ամենաանզպարձակ մոքով և զակայանում է նրանում, որ ժանտախտից պատահած հիւանդութեան ամեն մի դէպքի համար պարտաւոր են փոխազգարձարար յայտնել միմիեանց: Ժանտախտով վարչակուած տեղերից իւրաքանչիւը եկողին պահում են պետութեան, նահանգի, գաւառի կամ գիւղերի սահմաններում սուհնձին տեղում, կարանտինում հսկողութեան ներքոյ, մինչև որոշուած օքերը, մինչև որ կը ներբռոյ, մինչև որոշուած օքերը, մինչև որ կը ներբռի հիւանդ է նա թէ առողջ: Կարանտինպարզուի հիւանդ է նա թէ առողջ: Կարանտինների հսկողութեան շարունակութիւնը XV-րդ դարում տեսում էր 40 օր, որից և առաջ է եկել զարում տեսում էր 40 օր, որից և առաջ է եկել զարանտին խօսքը (quarantai-a), բայց այժմ բաւական են համարում մինչև անգամ 7-5 օրն էլ: Ճատերը ներկայումս համարում են կարանտինները իրանց նպատակին ըլ ծառայող միջոցներից մէկը և նրա փոխարին բաւականանում են բժշկական խիստ քննութեան ենթարկելով գնացող եկողներին և զրանց իրեղնները ախտահանելով:

Ժանտախտը ծովային ճանապարհով մուտք գործելու դէմ միջոցներ ձեռք առնելը կայանում է նրանում, որ բժշկական խիստ հսկողութիւն են նշանակում նաև մէջ, քննութեան ենթարկում նրա ծառայողներին և ճանապարհորդներին՝

անբարեյացող նաւահանգիստներից դուրս գալուց առաջ:

Եւրոպական նաւահանգիստները հասնելուց նաւերը ենթարկվում են սանիտարական—բժշկական խիստ քննութեան և բաժանվում են երեք մասերի. 1) բարեյազող, 2) կասկածելի և 3) վարակւած. Բարեյազող տեղերից գալուց նաւի ծառայողների խումբը և ճանապարհորդները ենթարկվում են բժշկական հսկողութեան մինչև 5 օր, հաշուելով նաւի դուրս գալու օրը անբարեյացող նաւահանգստից և ճանապարհորդութեան օրերը:

Կասկածելի նաւերը, այսինքն ժանտախտով կասկածելի հիւանդ ունեցողները, ենթարկվում են ախտահանութեան (գեղինֆեկցիայի). ախտահանվում են վարակուած տեղերը, նաւի ներքնայարկը, ուր պահում են բեռներն ու մըթերքները, և այն սպիտակեղիններն ու իրեղինները, որոնց հետ շփումն է ունեցել կասկածելի հիւանդը. Նաւաստիների խումբը և ճանապարհորդները բժշկական հսկողութեան տակ են դրվում 5 օր, նաւը տեղ հասնելու օրից սկսած:

Այն վարակուած նաւերից, որոնց մէջ երեսցել են ժանտախտով հիւանդները, ցամաքն են դուրս դուրս բերում թէ բոլոր առողջներին և թէ հիւանդներին. հիւանդներին անմիջապէս ուղարկում են հիւանդանոցը, իսկ առողջները ենթարկվում են խիստ առանձնացման և օբսերվացիայի (դիտողութեան) 5 օրից

ոչ աւելի, իսկ նաւը մեծ խնամքով ենթարկում են ախտահանութեան: Նաւերը նայելուց յետոյ, խիստ միջոցներ են ձեռք առնում մկները կոտորելու, անկախ նրանից. գտնվել են, արդեօք, ժանտախտից կոտորուած մկների դիակներ, թէ ոչ:

Երբ ժանտախտը մուտք է գործել արդէն, նրա տարածման դէմ գիշաւոր միջոցները պէտք է կենտրոնացնել հիւանդ մարդկանց վրայ, մկներին կոտորելու և վարակուած տեղերի սանիտարական ու առողջապահական պայմանները բարելաւելու վրայ:

ԺԱՆՏՈԽՏՈՎ ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԶԵԽԻՑ ԱՌՆԵԼԻՔ ՄԻՋՈՑՆԵՐԸ: Եթէ մի որևէ տեղում արդէն մուտք է գործել ժանտախտը, պէտք է աշխատել իր ժամանակին որոշել հիւանդութիւնը, ինարկէ, բակտերիոլոգիական միջոցով, և անմիջապէս էլ յայտարարել բոլոր հիւանդացածների մասին, այլ ոչ թէ ծածկել հիւանդութեան նոյն իսկ ամենաթեթև դէպքը, հիւանդը կասկածելի է: Ամեն մի անհատ և հասարակութիւն պէտք է ձգտէ զրան և պատահած ժանտախտային իւրաքանչիւր դէպքի մասին անյապաղ յայտնէ իշխանութեանը: Ժանտախտով հիւանդացողին իսկոյն պէտք է առանձնացնել դրա համար յատկացրած հիւանդանոցներում, իսկ ընտանիքի բոլոր առողջ անդամներին դուրս բերել անմիջապէս վարակուած բնակարաններից և տեղափոխել առանձնացրած բը-

Նակարաններ։ Նախ քան փոխադրելը, նրանց պէտք է լողացնել բաղնիքներում կամ տներում, եթէ յարմարութիւններ կան և հազցնել նոր պահտակեղիններ ու նոր շորեր։ Վարակուած տներից առանձնացած բնակարանները փոխադրված առողջների վրայ 5 օր շարունակ պէտք է բժշկական հսկողութիւն սահմանել, այդ ժամանակիմիջոցում նրանք ոչ մի յարաբերութիւն չը պէտք է ունենան ուրիշ բնակիչների հետ։ Նախին համաճարակների ժամանակ գործածութեան մէջ էր վարակուած տների շղթայակապելը, այսինքն. երբ մի տան կամ մի քաղաքում նկատվում էին ժանտախտով հիւանդացածներ, թէ տները, թէ ամբողջ քաղաքը շրջապատում էին զօրքով և, ինչպէս ցոյց տուեց 1837 թւին Օդեսսայի, ու 1879 թւին Վետլեանսկի (Հաշտարխանի մօտ) համաճարակները, մեծ օգուտ ունեցաւ։ Ներկայումս մեծ քաղաքներում գործադրում են ժանտախտով հիւանդացած տները պաշարելու միջոցը, մինչև դեղինֆեկցիայի վերջանալը, իսկ բնակիչներին դուրս են բերում առանձնացրած տներից։

Հնդկաստանում ժանտախտով վարակուած տներից առողջներին, կամ կասկածելի մարդկանց, դուրս են բերում և պահում վրանների տակ բուրովին առանձնացրած դիտողութեան դաշտերում։ Այդ միջոցը թէև համարվում է խելացիու օգտակար միջոցներից մէկը, բայց ունի իր որոշ դժուարութիւնները գործնական տեսակե-

տից։ որովհետև նախ՝ խանգարում է կեանքի սովորական կարգը և երկրորդ՝ որ ամեն տեղ, շնորհիւ կլիմայական պայմանների ու այլ տընտեսական նիւթական պատճառների, դժուար է իրազորդել այդ բանը։

Ժանտախտի համաճարակը որևէ է տեղում սաստկանալու դէպքում՝ վարակուած տեղերը շրջապատում են զօրքերով կամ բարեյացող տեղերի բնակիչներով, այդ ժամանակ մարդկանց զուրս գալը կամ ապրանքների զուրս տանելը կատարվում է որոշուած յատուկ տեղերով, այսպէս ասած, բժշկական—հսկողական կետերով (պունկտերով), ուր վարակված տեղերից եկողներին մի յայտնի ժամանակ, մինչեւ 5 օր, պահում են բժշկական հսկողութեան ներքոյ, իսկ զրանց ճանապարհորդական իրերը, բեռները, զորերը և բոլոր ապրունքները ենթարկում են ախտահանութեան։

Ամենակարեռագոյնը ժանտախտի ժամանակարաններն ու իրեղինները խնամքով ախտահանելն է. մանաւանդ, թոքային ժանտախտի դէպքում, շնորհիւ այն հանգամանքի, որ մանրէները (միկրօբները) վերին աստիճանի դիմացկուն են։ Անարժէք ըրեղինները պէտք է անպայման ալրել, իսկ մացածները ախտահանպայման ալրել, նույնական կամ 1-կը հազարի 1% սուլեյմով։ Հիւանդների կամ 1-կը հազարի շահագույն բացի, շափանակարանները, ախտահանելուց բացի, շափանականց օգտակար է նաև ախտահանել հարևան

քնակարանները, Քաղաքներում, նոյն իսկ գիւղերում, ժանտախտ երևալու դէպքում՝ հիանալի հետեանքներ է տալիս սանիտարական մաքրութեան վրայ լուրջ ուշադրութիւն դարձները. ամենատարրական ու անհրաժեշտ միջոցը ժանտախտի դէմ մաքառելու գործում՝ առողջապահական պայմանների բարւոքելն է. պէտք է դուրս բերել բոլոր անմաքրութիւնները, կեղտոտութիւնները քաղաքից, գիւղից, մաքուր պահել սենեակները, տները, գոները, բակերը, փողոցները, հրապարակները, շէնքերը, մթերանոցները, նկուլները և այլ քունջ ու պուճախները, այրել այդտեղերից դուրս բերած բոլոր աղտոտութիւնները, փսոր-մսորները, որովհետև զրանց մէջ կարող են լինել ժանտախտով հիւանդացած մկների կամ դրանց դիակների արտադրութիւնները. Երբ սպասվում է ժանտախտ, կամ արդէն յայտնվել է նա, անպայման անհրաժեշտ է կոտորել մկներին և փշացնել նրանց բները. Այդպիսի ընդհանուր ախտահանութիւնն կամ դեղինքեկցիա կատարուած է եղել առաջին անգամ Ալէքսանդրիայում (Եզիպտոսում), իսկ վերջին ժամանակներս նաև Օդեսսայում և փայլուն հետևանքներ է տուել. Մաքառման ամենատարրական միջոցներից մէկն էլ ժանտախտի դէմ՝ համարակալը տեղափոխող ու տարածող այդ կենդանիների՝ մկներին կոտորել տալն է, բնաշինջ անելը.

Բայց գերադասելին այդ միջոցներից այ-

նուամենայնիւ սանիտարուկան լաւ դրութիւնն է համարվում ընդհանրապէս բոլոր տեղերում և միայն այդ միջոցներով կարելի է փրկել երկիրը, գիւղերը, քաղաքները ժանտախտի մուտք զործելուց, իսկ եթէ մուտք էլ գործի, չէ կարող մեծ ծաւալ ստանալ, տարածուել, ինչպէս օրինակ. Դրինվիշում, ուր նկատուել էր ժանտախտի հիւանդութեան մի դէպք՝ Հնդկաստանից մուտք գործած, և շը նայելով, որ իր ժամանակին չէին կարողացել հիւանդութիւնը որոշել, ու նրան առանձնացնելու համար էլ հարկաւոր բայցարիկ միջոցները ձեռք չէին առել, բայց և այնպէս ժանտախտը շը կարողացաւ տարածուել շնորհիւ այն հանգամանքի, որ բաղաքը ընդհանրապէս գտնվում էր սանիտարական բարելաւ ու բարեկարգ վիճակի մէջ:

Ի՞նչՊիՍ ՎԱՐՎԵԼ ԺԱՆՏԱԽՏԻՑ ՄԵՌԱԾՆԵՐԻ ԴԻԱԿՆԵՐԻ ՀԵՏ.՝ ՄԵՌԱՆԵԼՈՒ յետոյ, դիակը փաթաթում են սուլեմայի 1 : 500 լուծուածքով թըջուած սաւանի մէջ, և եթէ ծնողները ցանկանում են լողացնելու արարողութիւնը անպատճառ կատարել, պէտքէ մարմինը լողացնել նոյն լուծուածքով։ Դագաղի տակը մի շերտ մարած կիր են շաղ տալիս, դնում են դիակը և նրա վրա ևս շաղ տալիս նոյնք, ու ապա դընում կափարիչը, անմիջապէս պինդ մեխում, դրսից ոռոգում են առատօրէն կարբօլեան 5% թթւուտով կամ սուլեմայով։ Հանգուցեալներին համրութելը միանդամայն անթոլատրելի, է և

վտանգաւոր։ Ընպայման գերադասելի է դիակ-ների այրելը, ինչպէս այդ անումէին վերջերս Մանջուրիայի համաճաշակի ժամանակ, որտեղ նոյն խոկ չէին խնայում ամբողջ տներ։ Թաղեր այրել, եթէ նրանք վարակուած են եղիլ ժանտախտով։

ԱՌՆԵՑՆԵՐԻ (ՄԵԾ ՄԿՆԵՐԻ) ՈՒ ԱՅԼ ՎՆՍ-ՍԸԿԱՐ ՄԻԶԱՏՆԵՐԻ ԴԵՄ ԿՌՈՒԵԼԸ, — Վերեռում ասացինք, որ ժանտախտի թունաւոր մանրէները հշշութեամբ փոխադրվում են շրջապատող մարդկանց վրայ կենդանիների ու միջատների միջոցով, ինչպէս. մզների, լուերի և փայտոցիների։ Հետևապէս շատ պարզ է որ ժողովրդին ժանտախտի հիւանդութիւնից պաշտպանելու համար հարկաւոր է ժամանակին մոտածել, որքան հնարաւոր է, լիակատար շափով կոտորելու, ոչնչացնելու այդ սարսափելի հիւանդութիւնը մարդկանց վրայ փոխադրողներին, որոնց շնորհիւ այդ հիւանդութիւնը մեծ բանակութեամբ մարդկային զոհեր է տանում զերեղման։

Այդպէս ուրեմն. ժանտախտի դէմ կռուելու երկրորդ գործը պէտք է լինի մեներին սիստեմատիկաբար կոտորելը, որ, սովորաբար, աջող կերպով կատարվում է թոյների օգնութեամբ; և շը պէտքէ մոռանալ, որ մեծ մզները, ապրելով զանազան պայմաններում, ունենում են նաև զանազան ճաշակներ։

Դրա համար գործ են ածում հետևալ թոյ-

ները. մկնդեղը, ֆօսֆորը և ստրիխնինը։ Այդ թոյների գործածութիւնը պէսոք է կատարել սակայն վերին աստիճանի զգոյշ կերպով, որպէսզի նրանցով պատահաբար շը թունաւորուեն ուրիշ կենդանիներ կամ նոյն իսկ մարդիկ։ Այդ պատճառով էլ բնակարաններում, բաց և գիւրամատշելի տեղերում այդ թոյները շը պէտք է գործադրել, իսկ եթէ բնակարաններում կարիք կայ գործադրել նրանց, պէտք է աշխատել դնել անմիջապէս բների ներսը։

Կացարաններում, մագաղիններում մթերանցներում առնետներին կոտորելու համար գործադրում են զանազան տեսակի թոյների և միջոցների հետևեալ խառնութեղը, 1) վերցնում են 3-4 գրամմ խոզի ճարպ, 16 գրամմ ալիւր, 2 գրամ մկնդեղ, 16 գրամմ ծեծված ընկոյզ և մի գրամմ ծեծված սամեթի սերմ (Սկրոփու սեմյ)։ Այդ բոլորը տաքացնում են ու խառնում, որպէսզի ճարպը հալւի։ Մկնդեղի այդ խառնութեղը (պաստայից) քսում են մսի կտորների, պանրի, խմորի ու այլ բաների. վրայ ու զնում բներում։ Պէտքէ ի նկատի վրայ ու զնում բներում։ Պէտքէ ի նկատի ունենալ, որ մկնդեղով թունաւորված մկները իրանց առատ կղկանքներով կարող են հեշտութեամբ աղտոտել շրջապատող իրերը թոյնով։

Ամբարձանոցներում, ներքնատներում, նրանուղներում ապրող մկներին թունաւորում են կուղներում ապրող մկներին թունաւորում են

Փօսֆորի զանգուածով:

2) Վերցնում են 30 մաս փօսֆոր, նոյնքան էլ ծծմբածխածին, 255 մաս խոզի ճրագու և 350 մաս ցորենի ալիւր: Փօսֆորը լուծում են ծծբածխածնի մէջ, ապա աւելացնում են խոզի ճրագու, իսկ վերջում՝ նաև ալիւր: Այդ զանդուածից պատրաստում են գնդակներ, որոնց և զնում են կրծողների բնի մօտ:

3) Հանում են փոքրիկ ձկների փորոտիքը, փորի խոռոշ ածում կարմիր փօսֆորի փոշի և զնում բների մօտ:

Ջրի հոսման տեղերում, աղտահորերում յաջողութեամբ գործադրում են ստրիխնինի ցորենը, որ պատրաստում են հետևեալ կերպով:

4) 1 դրախտա ստրիխնինը լուծում են 95%: Ֆունտ սպիրտի մէջ: Այդ խառնուրդը թափում են մի ֆունտ ցորենի վրայ: լաւ խառնում, կանաչ անիլինով գոյն տալիս և աւելացնում նրա վրայ 5 կաթիլ սամնթի իւղ (Սկրոփուո մածլո), բացի դրանից այդ շաղախի մէջ կարելի է ածիլ սախարինի խառնուրդ (սախարին սովորական շաքարից 350 անգամ քաղցը է):

5) Եյդ միջոցներից իբրև անվտանգ *) թէ
ուժի2 կենդանիների և թէ մարդ-

Մանօթ. -*) Հետևեալ թունաւոր դեղերը ձեռք բերելու համար այն է. մկնեղեղը, սարիխնինան, փօսֆորը. պէտք է ձեռք բերել բժիշկների գեղատոմոգի: Մակայն ժանտախախի համաձարակի ժամանակ ցանկալի կը լինէր այդ աղցելքները մեղմացնել: Կ դիւրութիւններ առաջաւասական խուզ անկիններում զիւղական հիւանդանոցների կամ ֆելտչերական պունկտերի միջոցով գոնէ մասակարարեն աղգարակութեանը կռուելու համար անհրաժեշտ այդ միջոցները:

կանց նկատմամբ, և սպեցիֆիկ յատկութիւն ունեցող համարում են ծովային սոխը (Scilla maritima), որ կարելի է գտնել ամեն մի դեղատնում: Դրանից մկների երիկամունքները հիւանդանում են, յետին ոտների վրայ առաջ է դալիս անդամալուծութիւն և հեշտութեամբ կոտորվում են: Գործադրելու համար պէտք է միջադարը մասերի և եփում ջրի մէջ, աւելացնելով նրա վրայ ըիչ քանակութեամբ ճրագու և իւղ: Եթք սոխից վերցնում են 3 պլուխ, կտրտում փոքր մասերի և եփում ջրի մէջ, աւելացնելով նրա վրայ ըիչ քանակութեամբ ճրագու և իւղ:

6) Ծովային սոխից պատրաստում են սպիրտի օշարակ վերցնում են մի մաս սոխ 5 մաս սպիրտի հետ, և դրանով ծծեցնում այն կլորեցրած խմորները, որոնք պատրաստայն կլորեցրած խմորները, որոնք պատրաստայն կլորեցրած ալիւրից և եփացրած ճրագուի ված են յաճախում: Ճաշակելով այդ գնդակները, անկոչ հիւրերը այլ ևս չեն երևայ: որովհետև ծովային ըրանց միջին աղին լինելով, թունաւորում է սոխը, խիստ թունաւոր լինելով, թունաւորում է նրանց:

լափում են նրանց ու կոտորվում:

7) Միւս անվտանգ միջոցը կիրն է շաղախ-ված շաքարի ու ալիւդի հետ. Կրի փոխարէն կարելի է գործածել նաև դաճ:

Մկներին հրապուրող մօտ տեղերում դնում են մի աման՝ այդ ջրով լի. մկները, ծարաւից տանջուելով, խմում են ու կոտորվում հէնց այդ ջրով լի ամանի մօտ:

Վերջին ժամանակներս մասսայական կերպով մկներին կոտորելու համար վաքակում են մկնային տիֆով, որոնց բռնժումները կարելի է ստանալ յատուկ լաբօրատօրիաներից: Հացը թրջում են բուլեօնի (մսաշրի) բուծումների ալդ բակտերիաներով և գցում զանազան տեղերում. մկները ուտում են նրանց ու կոտորվում:

Փակ բնակարաններում, ներքն ստներում և նաւերի ներքնայարկերում, մկներին ոչնչացնելը կատարում են խսդոող գազով հետևեալ եղանակով. 1000 խորանարդ մետր տարածութեան համար վերցնում են 10 կիլօ (կիլօն 2½ գրւանքայ է) ծծումը և 20 կիլօ փայտի ածուխ. ծծումբը այրում են փայտածուխի հետ միասին կրակացանք մէջ կամ աղիւսի յատ սկի վրայ, ինչպէս սովորաբար շեր սմասպահութեամբ պարապիտներն են ծծումբով ախտ անանում տները: Դրա գազից բուօր մզենքը խեղովում են ու կոտորվում: Մեծ մկների թաշարզով մկները բռնելը, կարելի է ասել, որ անցնում է անը-

պատակայարմար. որովհետև մկները սովորելով աշխատում են զգուշութեամբ խուսափել այդ հրապուրող թակարզներից: Հոգենաւերում մկներին կոտորելու համար կան յատուկ գործիքներ (Clayton, Nocht—giemsa), որոնք իրանցով պատրաստած գազերը մտցնում են նաւի ստորին նաւախորշերը (թթուածնոտ ածխածնի, ածխաթթուի, թթուածնոտ ծծմբի խառնուրդ է):

Միջատները, լուերը և փայտոչիները ներկայանում են անմարըութեան անվերջ ուղեկիցներ ապրելու բնակարաններում, ուստի մաքրութիւնը, մաքրասիրութիւնը թէ տներում. թէ շորերում անպայման պէտք է պահպանել կոտորելով այդ վնասակար պարագիտներին:

Լուերը, որ միշտ լինում են մարդկանց վրայ, իրանց ձուերը գնում են յատակների և կահկարասիների արանքներում: Դրանց սիրած տեղը, այսպէս ասած, որը անընդհատակների տակ գտնուած տարածութիւններն են, մանաւանդ եթէ թեփ կայ, որը շատ անզամ մնում է յատակի տակ աները շինելուց լետով: Միայն հասունացած միջատներն են անցնում մարդկանց վրայ: Այդ պատճառով շորերի մէջ եղած լուերը կոտորելիս՝ պէտք է կոտորել նաև նըանց ձուաները և թըթուրները: Դրա համար անհրաժեշտ է եփ տալ եռացրած ջրում սպիտակեղիները և շորերի վրա շաղ տալ պարսկական ուօմաշկա (լուի ծաղիկ) և յաճախ լուանալ նաւթախառն կամ սկիպիդարախառն ջրով յատակները,

և ընդհանրապէս յաճախ հեռացնել, դուրս բեր ել ապրելու տեղերից կեղտն ու փոշին:

Փայտոչիլները սովորաբար ապրում են մահճականների մէջ և դրանց մօտիկ բնակութեան տեղերում, ու թափվում են մարդկանց վրա զիմաւորապէս գիշերը, իսկ շորերի մէջ պատահմամբ մնում են մի օր:

Նրանց կոտորելու համար հարկաւոր է մահճականների արանքները յաճախ բսել կերասին (նաև թ), քացախի էսսենցիա և սկիպիդար:

Այդ վնասակար միջատների բազմանալու դէպում՝ բնակարաններում շատ յաջող կերպով կարելի է բնաջինջ անել նրանց դազի դեղին-ֆեկցիայով, կամ ֆօրմալինի գոլորշիով և զամծմբային անհիդրիտով (сърнистымъ аргидромъ).

Վերջին ժամանակներս յաջողութեամբ գործադրում են բոլող միջատների դէմ բժիշկ Մալինինի հակամօսկիտային հեղուկը, որ կարելի է դանել բոլոր դեղատներում: (Противумоскитная жиадкость д-ра Малинина).

ԸՆՉԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԶԴԻՌԻՇՈՒԹԻՒՆԸ.— Անձնական նախազգուշութեան համար, ի հարկէ, և բոլորի համար ամենալաւ նախազգուշական միջոց է երբէք չը շփուել ժանտախտով հիւանդացողների հետ, չօգտուել նրանց իրերից, պէտք է մաքուր պահել մարմինը, շորերը, բնակարանները, հակել առողջութեան վրայ, կանոնաւոր կեանք վարել, այնպէս, ինչպէս սո-

վորաբար. ուշադրութիւն դարձնել մարմնի բաց տեղերի վրայ, հսկել, որպէսզի շանգուածներ, քերծուածքներ չը լինեն ձեռքի վրայ, ոտարութիկ ման չը գալ: Նբանք, որոնք ինամուռմ են ժանտախտով հիւանդացողներին, մանսւանդ թոքային տեսակով վարակուածներին, պէտք է կրեն յատուկ դիմակներ, որ պաշտպանում է բներանը և ըիթը: Դիմակ չունենալու դէպքում հարկաւոր է շունչ քաշել թաց սպունգների միջով կամ թէ ծածկել երեսը թանձիփով:

Ուռուցքային տեսակի ժանտախտից վարակուելը այնքան էլ մէծ չէ, երբ ժանտախտիցուպիկները փակուած են ուռած գեղձերի մէջ: Երբ ուռուցքները թարձիակալվում են, փափկում ու բացվում, նոյն իսկ վարակման երկիւ պը այդ թարձիսից աննշան է: որովհետև ուռուցքների թարձիսը շատ քիչ ժանտախտի ձողիկներ է պարունակում իր մէջ, կամ եթէ պազիկներ է պարունակում իր մէջ, կամ աթօնակ են ըռունակում էլ է, համարեա, անկենսունակ են նրանք: Ընդհակառակը, չափազանց վարակիչ ներանը սեպտիցիոմիական ուռուցքային ժանեն ծանր սեպտիցիոմիական ուռուցքային: Ժանտախտի դէպքերը, երբ ժանտախտի բացիները զեռ կենդանութեան ժամանակ արտաթորվում են: Կազմուածքից (բղլամի) խորխի, կղկղանքի, են կազմուածքից ժամանակ: Վերջապէս ամենաերկիւ քորքոքման ժամանակ: Վերջապէս ամենաերկիւ քորքոքման ժամանակ:

տալիս խուխը մանրիկ մասնիկներով, որոնք պարունակում են իրանց մէջ անհամար քանակութեամբ բացիներ, և, այդպիսով, հիւանդներին շրջապատող մթնոլորտը վարակում են ժանտախտի բացիներով։

Բժիշկներն ու բժշկական պերսօնալը ամենից քիչ են ենթարկվում վարակման հրկիւղին, եթէ միայն լաւ հետեւու են իրանց ձեռքերի մաքրութեան ժանտախտով հիւանդին նայելուց յետոյ, և աշխատում են ընդարձակ, օդը մաքուր, առողջապահական տեսակէտից լաւ կազմակերպված ու կահաւորված հիւանդանոցներում։

Հին ժամանակներում գործածական էր իւղ քսելը. ձեռքերը իւղ էին քսում և հագնում անթափանցելի կտորից կամ կառչուկից կարած խալաթներ նախազգուշութեան համար. ներկայումս այդ բանը այնքան էլ անհամեշտ չէ համարվում. որովհետեւ վրանով միայն ահ ու սարսափ էին ազդում հիւանդների ու առողջների վրայ։ Հիւանդներին այցելելիս բաւական է ամեն անգամ հագնել քաթանի մաքուր խալաթ, ինչպէս որ հիւանդանոցներում առհասարակ հագնում են հիւանդանոցի ծառայողները, բժժիշկները, ֆելդչեները, իսկ դուրս գալուց՝ ձեռքերը մեծ խնամքով լուանալ սապոնով կամ սուլէմայով. վատ չի լինի, ի հարկէ, լուանալ սուլէմայով (1:1:00) նաև միքուքն ու մազերը. Հարկաւոր է ուշադիրութիւն դարձնել լաւ

սնունդ ունենալու վրայ։

ԺԱՆՏ ԽՆԾԻ ԲԺՇԿՈՒԹԻՆԸ — ներկայաւմս թէ թոքային և թէ ուռուցքային սովորական ժանտախտի գէմ ոչ մի որոշ յուսալի բժշկական միջոց չը կայ. Բուժողական շատ միջոցներ են փորձել, շատ դեղեր գործադրել, բայց ոչ մէկը դեռ ևս իրական օգուտ չէ տուել այդ հիւանդութիւնը բուժելու գործում. Բժշկական օգուտթիւնը սահմանափակվում է միայն նրանով, որ բարձրացնում է մարդու օրգանիզմի ոյժը, մանաւանդ սրտի գործունէութիւնը. Այդ կողմից ամենաօգտակարը համարում են ալկօհոլը՝ խըմիշըները, որ տալիս են հիւանդին մեծ քանակութեամբ և դա ամեննին արբեցողութիւն չէ նկատվում. Տալիս են զրգուցուցիչ միջոցներ. օրինակի համար բժ. Աօեաման, երբ չօնդկուգում վարակուեց ժանտախտով, իր գերօրինակութեամբ վերաբրում է նրան, որ իր հիւանդակ վիրկուելը վերաբրում է նրան, որ իր հիւանդութեան հէնց սկզբի օրից տալիս էին խմելու գութեան հէնց սկզբի օրից տալիս էին խմելու մեծ քանակութեամբ գինի, ամենակի (անունուական) և դիղին մատնէտունկի պրէպարատցդրի) և դիղին մատնէտունկի պրէպարատցդրի)

Ոչ թէ տենդի ժամանակ, այլ տարութիւնը իջնելուց յետոյ, հիւանդը մի քանի ժամանակ պէտք է մնայ անկողնում (4 օր. ոչ պակաս) և խոյս տայ խիստ շարժողութիւնից, ապա և խոյս տայ խիստ շարժողութիւնից, ապա թէ ոչ այս ժամանակ կարող է յանկարծակի սրտի կաթուած ստանալ։

Անձնական նախազգուշութեան միջոցնե-

Իից մէկնէլ պատւաստումն է:

Հէնդ որ գտնուեցաւ ժանտախտի մանրէն (միկրօրը), բժ. Երսէնը անմիջապէս պատրաստեց հակաժանտախտային շիճուկ այն ձեռվ, ինչ ձեռվ որ պատրաստում են հակալիֆտերիտային շիճուկը: Նախապաշտպանողական պատւաստումների օգուտը անկասկածելի է: Այդ իրական ապահովութիւնը վարակիչ հիւանդութիւններից (իմմունիտետը), նրանցից զերծ մնալը շարունակվում է մի քանի ամիս: Վարակման անընդունելիութիւնը չէ իւրացվում սրսկումից անմիջապէս յետոյ, այլ մի քանի օրից յետոյ միայն (5—7 օր), երբ օրգանիզմը նկառում է արտադրել պաշտպանողական հիւթեր: Պատւաստուածների մէջ հիւանդացողների թիւը 5 անգամ քիչ է՝ քան շը պատւաստուածների մէջ, իսկ մեռնողների թիւը 8—9 անգամ պակաս՝ քան պատւաստուածների մէջ:

Հակաժանտախտային շիճուկը իրքն բուժի միջոց, երկար փորձառութիւններից յետոյ, ինչպէս և ուժիշ շիճուկներ, ցոյց է տուել իր անզօրութիւնը և նրա նշանակութիւնն էլ այնքան մեծ չէ ու դեռ ևս դրական գիտական հիմունքներ էլ չունի, թէն շատերը աշխատում են ապացուցանել, որ նա ապշեցուցիչ հետեւանքներ է տուել: Մօսկվայի բժիշկների ընկերութեան նիստում բժիշկներ Խօլինի և Սինայէվի կարդացած գեկուցումներից երևում է, որ շիճուկի պատւաստումը առավիս է 30—35%:

առողջացողներ, սակայն հազրագիւտ չէին նաև «շիճուկային» հիւանդութեան դէպքերը: Պրօֆէսոր Զաբոյօտինը պատւաստումները, շիճուկաբութիւնը (սիրօթէրապիա) գտնում է շատ օգտակար:

Կան երկու տեսակ հակաժանտախտային միջոցներ: Մէկը՝ բժ. Խավկինի հակաժանտախտային պատւաստանիթ (Վակցիա), որը գործ է ածվում իրքն նախապաշտպանող միջոց: Ըստ Խաւկինի, շը պատւաստուածների մահացութիւնը 60,00 %, է կազմում, իսկ պատւաստուածներինը՝ 23, 9%:

Միւս միջոցը երսենի (լերսենի) հակաժանտախտային շիճուկն է, որը գործադրվում է թէ իրքն բուժիչ և թէ իրքն նախապաշտպանող միջոց:

Դժբախտաբար այդ միջոցները ներկայումս Մանջուրիայում անզօր են հանդիսանում մանաւանդ թոքային ժանտախտի դէմ:

Հը նայելով նախապաշտպանողական պատւաստումների որոշ շափով տուած օգտին, այւուամենայնիւ ժանտախտի դէմ կոիւ մղելու գործում չի կարելի սահմանափակուել և բաւագործում չի կարելի սահմանափակուել և բաւագործում միայն դրանով, ու այդպիսով առաջին կանանալ միայն դրանով, են սանիտարական առողջեղը դարձեալ բռնում են սանիտարական առողջապահական լաւ միջոցները, նկատված է աըցապահական լաւ միջոցները, որոնք ապրում են դէն, որ այն բուր երկիրները, որոնք ապրում են դէն, որ այն բուր երկիրները, որոնք ապրում են դէն:

Հը նայելով այն բոլոր ճանապարհների խորհրդաւորութեան, որոնցով տարածվում է ժանտախտը անտեսանելի միջատների աշակցութեամբ, գիտնականների համար ապացուցված է համարվում այն իրողութիւնը, որ ժանտախտի համաճարակը (ինչպէս և խօլերայինը) ոչ մի այն բժշկութեան գործն է, այլ և որ գլխաւորն է՝ կուլտուրայի հասարակական կազմակերպութեան գործը, և որ այն երկիրն է լաւագոյն կերպով ապահովուած ժանտախտից, որի մէջ այդ վերոյիշեալ պայմանները, այսինքն բժշկական գործը, կուլտուրան և հասարակական կազմակերպութիւնը լաւ պայմանների մէջ են գտնվում:

Հասարակական կազմակերպութիւնը և կուլտուրայի ոյժը, ինչպէս առհասարակ, այս անգամ ի խելացի կերպով ներկայացնում է Անգլիան: Ապացոյց զրան՝ Սուֆֆօլկում պատահած ժանտախտի դէպքը (Էմմա Գուդալի), որ սաքի հանաց ոչ միայն տեղական իշխանութիւններին, բժշկական մարմիններին, այլ և հասարական խաւերը, Սուֆֆօլկի բնակիչները բացառապէս ուշադրութիւն դարձրին առնետների և ուրիշ կոծողների վրայ: Կազմակերպվեցին բազմաթիւ «առնետային կլուբներ» մինչև իսկ ամենափոքրիկ գիւղերում անգամ: Այդ կլուբների անդամները երդմամբ պարտաւորվում էին, ինչ ձեռք և ինչ միջոցներով ուղղում է լինի, սպանել բոլոր առնետներին ու մկներին: Ըստուել էին այդ առնետներն ու մկները կոտորող-

ների վրայ զեկավարներ, որոնց ենթարկվում էին բազմաթիւ օգնականներ. սահմանուած էր պարզեատրութիւն. առնետների գլխի համար նշանակված էր 10 կոպէկ վարձատրութիւն: Բոլոր բանւորները հետամուտ էին լինում առնետներ սպանելու: Բոլոր ցանկացողներին ձրի տալիս էին առնետներին կոտորող թոյն: Անկարելի է հաշուել կոտորուած առնետների թիւը. Նրանցից շատերը սատկութեցին իրանց ստորերկրեայ բներում, ցեմենտի լուծուածքում խեղղամահ եղան, կամ ջաւառոյ արուեցին գետերում: Բայց շնորհամ ջաւառոյ արուեցին ապահովում էին այդ առնետների դիակները, այնուամենայնիւ կարելի եղաւ մօտաւորապէս հաշուել, և պաշտօնապէս հաստատուել է, որ օրեկան սպանվում էին 9000 հաստատուել է, որ առնետների մէջ, այնպէս որ առանց չափազանթիւնների մէջ առնետները մի ամցութսան կարելի է ասել, որ Անգլիան մի ամսութանական առաջնորդում ազատուեց միլիոնաշափ առուայ ընթացքում ազատուեց միաժամանակ կոտորում նետներից: Լստ որում միաժամանակ կոտորում էին կատուններին էլ երկիւղից դրդուած՝ որովէին կատուններին նաև առանց ճագարներին, և բակուել: Սպանում էին նաև ճագարներին, և բակուել: Մասնում էին նաև ճագարներին, և բակուել: Սպանում էին նաև ճագարներին, և բակուել:

Կոտորելու այդ ձեզ հետևեալ կերպով է իրագործվում: Էլէքտրականութիւնը անցկացնող լարը ձգում են հողից հինգ սանտիմետրաշափ բարձր և ծայրին ամրացնում են մի կտոր խողի ճրագու, անխի հատիկներ ցանում վրան, որը արտասովոր գրաւչութիւն ունի առնետների համար: Նրանք կանգնում են, հոտուառում նրան, կպչում լարին և էլէքտրականութեան հարուածից սպանվում: Միներին կոտորելու համարեաթէ նոյնանման սիստեմը գործադրուեց նաև Օղեսսայում վերջին համաճարակի ժամանակ: Վերջինիս օրինակին հետեւցին նաև Թիֆլիսում և այլն:

Եւ ահա այդպիսի կուլտուրական պայմանների շնորհիւ, Անգլիայում այն կարծիքն է տիրում, որ այդ երկիրը բոլորովին փրկուած է ժանտախտի ներմուծման հաւանականութիւնից:

Կուլտուրայի անհրաժեշտութիւնը, որպէս ժանտախտի դէմ մաքառելու միակ նախագգուշական միջոցի, այնու առաւել պահանջ է դառնում, որովհետեւ ժանտախտի տարածման պայմանները դեռ ևս լաւ ուսումնասիրուած, հետազոտուած չեն: Հէնց այդ հետազոտութեան համար էր, որ անցեալ 1911 թին՝ ամառը հոչակաւոր ոռւս գիտնական բակտերիօլոգ պրօֆ. Մինիկօվը Ստորախանի նահանգը գնաց երևացած ժանտախտը հետազոտելու տեղն ու տեղը: Միևնույն նպատակով էլ նա ուշադրութիւն է դարձնում առանց բացառութեան այն բոլոր

միջատների վրայ, որոնք շրջապատում են ժանտախտից մեռածների դիակները:

Մինիկովի հեղինակաւոր կարծիքով, եթէ նըստապան մեր օրերում զերծ է մնում համաճարակներից, ալատնառը նրա սանիտարական բարւոք վիճակն է: Դրա շնորհիւ էլ նա անվարակելի է և ժանտախտից վախենալու պատճառու չունի:

Ուրեմն մաքրութիւն. մաքրութիւն ամեն բանում, ամեն տեղ և ամեն ժամանակ, բայց ևս առաւել համաճարակների վտանգի հանդէպ. ահա ժամանակակից բժշկականութեան դէվիզը, նրա վերջին խօսքը, միակ տարրական նպատակայարմար խորհուրդը, որ ամենահասկանալին է և ամենասատչելին թէ ուների համար, թէ շինականի շքաւորի, թէ քաղաքացու համար, թէ շինականի ու շինական համայնքների համար:

Սանիտարական-առողջապահական բարւոք պայմաններ ստեղծելը կուլտուրական ազգերի, անհատների ու անհատների ամենահասարակութիւնների ու անհատների ամենահասարակութիւնների գիտում համաճարակների դէմ առհասարակ կուռում իս համաճարակների դէմ, նախագգուշ մասնաւրապէս ժանտախտի դէմ, նախագգուշ մասնաւրապէս միջոցներով չէզօքացնում, մեշակով խելացի միջոցներով չէզօքացնում, մեշակով կուսացնում նրան ու արմատախիլ անում:

Սանիտարական - առողջապահական բարեկեցիկ պայմաններ ստեղծելու համար՝ անհրական կեցիկ պայմաններ ստեղծելու համար՝ անհատ ժեշտ է, որ ոչ մի յն իւրաքանչիւր անհատ ձգտէ իրան մաքուր պահելու, ոչ միայն իր

անմիջական շրջապատը դնէ առողջապահութեան պահանջներին համապատասխան պայմանների մէջ, այլ և մասնակից լինի ընդհանուր հաւաքական համերաշխ գործակցութեան ու կատարէ ճշտութեամբ այն խելացի խորհուրդներն ու ցուցմունքները, որոնք բղխում են կառավարչական և հեղինակաւոր զիտական-բժշկական մարմիններից, որպէսզի բեղմնաւոր ու, աջող լինի կուիր, մանաւանդ այն խաւերում, ուր տգիտութիւնը դեռ ևս գերիշխող է, ուր մասսան զուրկ է ինքնօգնութեան գաղափարից:

Դէն ձգենք, ուրեմն, անտարբերութիւնը՝ լինենք պարտաճանաչ թէ իբրև անհատ և թէ իբրև հասարակութեան անդամ. ձգտենք ինքնօգնութեան, ինքնամաքրութեան, զիտակցական վերաբերմունք և ինքնագործ ունէութեան եռանդ ցոյց տանը համայնական կուում, ներկայ սանիտարական և առողջապահական հրատապ, անյետաձգելի խնդրում:

Մէկը ընդհանուրի համար և ընդհանուրը մէկի համար. — Թող դա լինի իւրաքանչիւր անտուի, իւրաքանչիւր հասարակութիւնների ու համայնքների մշտական նշանարանը:


Վ Ե Բ Զ



№ 1.
Ուռուցքային ժանտախոր կոնտակին



№ 2.
Ժանտախտի փաշախտային վերքը զիսի վրայ



№ 3.
Ժանտախտի բացիլները

«Ազգային գրադարան



NL0285553

6831

H APM.
2-3867₂

ԳԻՆԵ Լ 20 ԿՈՊ.